

**ԱՐՈՒ ԱԼ-ՀԱՍԱՆ ԱԼԻ ԻՐՆ ԱԼ-ՀՈՒՄԱՅՆ ԻՐՆ ԱԼԻ
ԱԼ-ՄԱՍՈՒԴԻ**

**«ՈՍԿՈՒ ՄԱՐԳԱԳԵՏԻՆՆԵՐ ԵՎ ԳՈՐՀԱՐՆԵՐԻ ՀԱՆՔԵՐ»
(«ՄՈՒՐՈՒՋ ԱԶ-ՋԱՀԱԲ ՎԱ ՄԱԱԴԻՆ ԱԼ-ՋԱՎԱՀԻՐ»)**

**«ՑՈՒՑՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԳԻՐՔ»
(«ՔԻԹԱԲ ԱՏ-ՏԱՆԲԻՀ ՎԱԼ-ԻՇՐԱՖ»)**

(հատվածներ Հայաստանի, Կովկասյան լեռների և հարևան երկրների
մասին)

ԵՐԵՎԱՆ

Հեղինակային հրատարակություն

2007

*Նվիրում եմ Արցախյան պատերազմում զոհված
հորեղբորս՝ Սպարտակ Եղիազարյանի հիշատակին
թարգմանիչ*

**ԱԲՈՒ ԱԼ-ՅԱՍԱՆ ԱԼԻ ԻԲՆ ԱԼ-ՅՈՒՍԱՅՆ ԻԲՆ ԱԼԻ
ԱԼ-ՄԱՍՈՒԴԻ**

**«ՈՍԿՈՒ ՄԱՐԳԱԳԵՏԻՆՆԵՐ ԵՎ ԳՈՂԱՐՆԵՐԻ ՅԱՆՔԵՐ»
(«ՄՈՒՐՈՒՋ ԱԶ-ՋԱՅԱԲ ՎԱ ՄԱԱԴԻՆ ԱԼ-ՋԱՎԱՅԻՐ»)**

**«ՑՈՒՑՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԳԻՐՔ»
(«ՔԻԹԱԲ ԱՏ-ՏԱՆԲԻՅ ՎԱԼ-ԻՇՐԱՖ»)**

(հատվածներ Յայաստանի, Կովկասյան լեռների և հարևան երկրների
մասին)

*արաբերեն բնագրերից թարգմանությունը, Մասուդու կենսագրությունը և
ժանոթագրությունները
պատմ. գիտ. թեկնածու Ա.Ս. Եղիազարյանի*

ԵՐԵՎԱՆ-2007

ՀՏԴ 93 / 99 (093)

ԳՄԴ 63.2

Ա 169

Գիրքը տպագրվում է ԵՊՀ պատմության ֆակուլտետի հայոց
պատմության ամբիոնի երաշխավորությամբ:

Խմբագիր՝ ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի
արաբագիտության ամբիոնի ասիստենտ պատմ. գիտ.
թեկնածու Յ. Մ. Քոչարյան

Ա 169

Աբու ալ-Ղասան Ալի իբն ալ-Ղուսայն իբն Ալի ալ-Մասուդի
Ոսկու մարգագետիններ և գոհարների հանքեր,
Ցուցումների և դիտարկումների գիրք,- թարգմանեց և
հրատարակության պատրաստեց Ա.Ս. Եղիազարյանը.-
Եր., հեղինակային հրատարակություն, 2007, 43 էջ:

Եր.,

Գրքում թարգմանաբար ներկայացված են հատվածներ X դարի արաբ նշա-
նավոր մատենագիր Մասուդու «Ոսկու մարգագետիններ և գոհարների հանքեր»
ու «Ցուցումների և դիտարկումների գիրք» երկասիրություններից: Դրանք մեծ հա-
մարում ունեն արևելագետների և պատմաբանների շրջանում, քանի որ իրենցից
հանրագիտարանային արժեք են ներկայացնում: Մասուդու աշխատությունները
հարուստ տեղեկություններ են պարունակում Հայաստանի և հարևան երկրների
մասին, ըստ որում՝ դրանք տարաբնույթ են՝ առնչվելով ինչպես այդ երկրների
պատմությանը, այնպես էլ աշխարհագրությանը և ավանդույթներին:

ԳՄԴ 63.2

ISBN 978-99930-4-689-9

© Ա. Եղիազարյան, 2007թ.

ԱՔՈՒ ԱԼ-ՉԱՍԱՆ ԱԼԻ ԻՔՆ ԱԼ-ՅՈՒՍԱՅՆ ԻՔՆ ԱԼԻ ԱԼ-ՄԱՍՈՒԴՈՒ «ՈՍԿՈՒ ՄԱՐԳԱԳԵՏԻՆՆԵՐ¹ ԵՎ ԳՈՉԱՐՆԵՐԻ ՉԱՆՔԵՐ»² ՈՒ «ՑՈՒՑՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԳԻՐՔ»³ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Արևելքի երկրների պատմության ուսումնասիրության համար արժեքավոր սկզբնաղբյուրներ են արաբ մատենագիրների երկերը: Նրանց մեջ կարևոր տեղ է զբաղեցնում X դ. հեղինակ Մասուդին, որի աշխատությունները միշտ եղել են արևելագետների ուշադրության կենտրոնում, քանի որ աչքի են ընկնում տեղեկությունների առատությամբ և բազմազանությամբ: Չնայած դրան, արաբ նշանավոր հեղինակի երկերը դուրս են մնացել հայ թարգմանիչների ուշադրությունից: 2005 թ. լույս տեսավ IX-X դդ. արաբ 18 մատենագիրների աշխատությունների՝ Չայաստանին և հարևան երկրներին վերաբերող հատվածների Ա. Տեր-Ղևոնդյանի թարգմանությունը⁴: Նրանում ընդգրկված հեղինակների թվում չկար Մասուդին: Թերևս, խնդիրը Մասուդու աշխատություններում Չայաստանին վերաբերող տեղեկությունների սակավությունն է: Այդուհանդերձ, նրա երկերը մեծ

¹ Փորձ է արվել մարգագետին («մուրուջ») բառի տակ հասկանալ «լվացարան» (նկատի ունենալով ոսկու համաձոյի վվացարանները), այսինքն՝ Մասուդու աշխատության վերնագիրը դարձնելու «Ոսկու վվացարաններ և գոհարների հանքեր» (տե՛ս Крачковский И., Избранные сочинения, т. IV, М.-Л., 1957, էջ 172):

² Տե՛ս ١٩٤٨، القاهرة، ١-٢، مروج الذهب و معادن الجواهر، مسعودي، Այս աշխատությունն առաջին անգամ հրատարակվել է Փարիզում 1861-1877 թթ. (տե՛ս Macoudi, Les prairies d'or, texte et traduction par C. B. de Meynard, I-IX, Paris, 1861-1877): Չայսինի են Մասուդու այս երկի Կովկասյան լեռներին և դրանց հարևան երկրներին վերաբերող հատվածների Վ. Սինորսկու և Ն. Կարաուլովի թարգմանությունները (տե՛ս Минорский В., История Дербенда и Ширвана IX-X вв., Москва, 1963, էջ 188-215, Караулов Н., Сведения арабских писательей о Кавказе, Армении и Азербейджане, “Сборник материалов для описания местностей и племен Кавказа”, вып. 38, Тифлис, 1908, էջ 37-61): Վերջերս լույս է տեսել Մասուդու տվյալ երկաիրության Դ. Միկուլսկու ամբողջական թարգմանությունը (տե՛ս ал-Мас’уди, Золотые сопы и россыпы самоцветов, перев. и ком. Д.В. Микульского, Москва, 2002):

³ Տե՛ս “Kitáb at-tanbih wa’l ischráf auctore al-Masúdí”, -BGA, editio II, p. VIII, Lugd. Bat., 1967. Այս աշխատությունն առաջին անգամ հրատարակվել է Լեյդենում՝ 1894թ.: Դրա՝ Կովկասյան լեռներին և հարևան երկրներին վերաբերող հատվածները քաղել ու թարգմանել է Ն. Կարաուլովը (տե՛ս Караулов Н., նշվ. աշխ., էջ 31-37):

⁴ Տե՛ս «Օտար աղբյուրները Չայաստանի և հայերի մասին», 16, «Արաբական աղբյուրներ», Գ, Արաբ մատենագիրներ, Թ-ժ դարեր, ներածությունը և բնագրերից թարգմանությունները Ա. Տեր-Ղևոնդյանի, Երևան, 2005:

կարևորություն ունեն Չայաստանի պատմության և աշխարհագրության մի շարք խնդիրների ուսումնասիրության համար, ինչի համար էլ մենք ձեռնարկեցինք այս թարգմանությունը: Մյուս կողմից, Մասուդու հաղորդած տեղեկությունները մեծ կարևորություն են ներկայացնում կովկասագիտության համար: Մենք թարգմանել ենք Մասուդու «Ոսկու մարգագետիններ և գոհարների հանքեր» և «Ցուցումների և դիտարկումների գիրք» աշխատությունների՝ Չայաստանին, Կովկասյան լեռներին և դրանց հարևան երկրներին վերաբերող հատվածները: Ներկա թարգմանությունը, հուսով ենք, իր համեստ ներդրումը կբերի Չայաստանում հայագիտության, արաբագիտության և կովկասագիտության զարգացման գործին:

Չաշվի առնելով արաբերենից հայերեն տառադարձության դժվարությունը, մենք՝ ելնելով մեր նախորդ թարգմանիչների և, մասնավորապես, Ա. Տեր-Ղևոնդյանի փորձից, կիրառել ենք հետևյալ պայմանական տառադարձությունները: Քանի որ որոշ արաբերեն հնչյուններ չունեն իրենց հայերեն համարժեքները, ինչպես, օրինակ՝ ڪ-ն (սա), ڤ-ն (սադ), ڄ-ն (հա), ڙ-ն (զալ), ڙ-ն (դադ), ڙ-ն (զա) և ڄ-ն (այն), մենք դրանք պարզապես հարմարեցրել ենք հայերեն հնչյուններին: Օգտագործել ենք հետևյալ տառադարձություններն ու հարմարեցումները.

أ - ա	د - դ	ض - դ	ك - ք
ب - բ	ذ - զ (դ)	ط - թ	ل - լ
ت - տ (թ)	ر - ռ	ظ - զ	م - մ
ث - ս	ز - զ	ع - ա (ը)	ن - ն
ج - ջ	س - ս	غ - դ	ه - հ
ح - հ	ش - շ	ف - ֆ	و - ու (վ)
خ - խ	ص - ս	ق - կ	ي - յ (ի)

Արաբերենի որոշիչ հոդը՝ «ալ»-ը, բաղաձայնով սկսվող բառից առաջ արտասանվում է ըստ իրեն հետևող բաղաձայնի: Եթե նրան հետևում է արեգակնային բաղաձայն (ت, ث, د, ذ, ر, ز, س, ش, ص, ض, ط, ظ, ل, ن), ապա նրա «լ» հնչյունը հնչում է իրեն հետևող բաղաձայնի նման ու արտասանվում է կրկնակի: Օրինակ՝ գրվում է «ալ-զահաբ», բայց կարդացվում «ազ-զահաբ»: Իսկ եթե հաջորդող բառի առաջին բաղաձայնը լուսնային է (أ, ب, ج, ح, خ, ع, غ, ف, ق, ك, م, ه, و, ي), ապա կարդացվում է գրվելու ձևով: Օրինակ՝ գրվում և կարդացվում է «ալ-ջավահիր»: Չարմար ենք գտել վերոհիշյալ դեպքերում բառերը գրել այնպես, ինչպես արտասանվում են:

Թարգմանության մեջ տեղանունները և անձնանունները տվել ենք ըստ Մասուդու: Երբեմն փակագծերում նշել ենք, թե ու՞մ կամ ո՞ր երկիրն է նկատի ունեցել հեղինակը, իսկ քառակուսի չակերտներում, ինչպես և արաբերեն բնագրում է, տվել ենք Մասուդու երկերի մյուս տեքստերից բերված կամ մեր կողմից անհրաժեշտ գտած հավելումները: Արաբերեն անձնանունների և տեղանունների ստուգաբանությունը կատարել ենք տողատակում:

Մեր այս թարգմանությունը կատարված է Մասուդու «Ոսկու մարգագետիններ և գոհարների հանքեր» աշխատության 1948թ. Կահիրեի հրատարակությունից և «Ցուցումների և դիտարկումների գիրք» աշխատության 1967թ. Լեյդենի հրատարակությունից: Տեքստում փակագծերի մեջ նշված թվերը ցույց են տալիս Մասուդու երկի վերոհիշյալ արաբերեն հրատարակությունների համապատասխան էջերը:

Արման Եղիազարյան
Պատմական գիտությունների թեկնածու
ԵՊՀ

ԱՐՈՒ ԱԼ-ՉԱՍԱՆ ԱԼԻ ԻԲՆ ԱԼ-ՅՈՒՍԱՅՆ ԻԲՆ ԱԼԻ ԱԼ-ՄԱՍՈՒԴԻ (Կենսագրությունը)

Աբու ալ-Չասան Ալի իբն ալ-Յուսայն իբն Ալի ալ-Մասուդին կամ պարզապես Մասուդին X դ. արաբ հեղինակ է, որը ծնվել է Բաղդադում IX դ. վերջին՝ ազնվականի ընտանիքում: Ստացել է կրոնական, իրավաբանական և բանասիրական կրթություն: Ծանապարհորդել է Պարսկաստանում, Յնդկաստանում և Ցեյլոնում, հասել Չինական ծով և Ջանգիբար: Եղել է նաև Կասպից ծովի հարավային շրջաններում, Ասորիքում, Պաղեստինում, Եգիպտոսում, որտեղ էլ կնքել է իր մահկանացուն 956 թ.: Ցավոք, նրա աշխատությունների մեծ մասը մեզ չի հասել, բայց հայտնի է, որ նա մեծ գրական ժառանգություն է թողել: Այդ պատճառով բանասերները նրան համարում են արաբների Յերոդոտոս¹: Նա բազմակողմանի զարգացած անձնավորություն է եղել ու հետաքրքրվել է ոչ միայն մուսուլմանների, այլև քրիստոնյաների ու հնդիկների կենցաղով ու պատմությամբ: Նրա ամենածավալուն աշխատությունն ունեցել է երեք խմբագրություն՝ ընդարձակ, միջին և համառոտ: Ընդարձակ խմբագրությունը՝ «Քիտաբ ախբար ազ-զաման»-ը («Ժամանակի լուրերի գիրք»), բաղկացած է եղել 30 հատորից: Այն մեզ չի հասել: Հալեպում գտնվել է միայն դրա առաջին հատորը, որում Մասուդին պատմում է արաբչազործության մասին, շարադրում հին Եգիպտոսի ավանդական պատմությունը: Այդ բազմահատորյակից քաղված ավելի համառոտ մի աշխատություն է «Քիտաբ ալ-ավսաթը» («Միջին գիրք»), որից ևս միայն մեկ հատոր է պահպանվել: Ամբողջությամբ մեզ է հասել «Ոսկու մարգագետիններ և գոհարների հանքեր» խորագրով աշխատությունը, որը «Քիտաբ ախբար ազ-զաման»-ի համառոտ խմբագրությունն է: Մասուդին այն գրել է 943 թ., վերանայել 947 թ. և վերանշակել 956 թ.: Մեզ է հասել միայն 947 թ. վերանայված տարբերակը²: Այն պատմաաշխարհագրական, նկարագրողական բնույթի աշխատություն է, որտեղ Հայաստանին քիչ տեղ է հատկացված, սակայն, այն, ինչ որ կա, մեծ արժեք է ներկայացնում հայագիտության համար: Կովկասյան լեռների և հարևան շրջանների նկարագրությունը, որը բավական մանրամասն է, մեծ կարևորություն է ներկայացնում կովկասագիտության համար: Այն հնարավորություն է տալիս ճշգրտումներ մտցնելու Կովկասյան լեռների շրջանի երկրների և ցեղերի

¹ Տե՛ս P. Hitti, History of the Arabs, New York, 1967, էջ 391:

² Տե՛ս ал-Мас'уди, перев. Д.В. Миккульского, էջ 30:

պատմության, տեղադրության և այլ կարևոր խնդիրներում: Արժեքավոր է նաև Մասուդու կողմից տարբեր ժողովուրդների սովորույթների նկարագրությունը: Նրա գրչին է պատկանում նաև «Ցուցումների և դիտարկումների գիրք» պատմաաշխարհագրական երկը, որտեղ կարևոր տեղեկություններ են պահպանվել Հայաստանի, Կովկասյան լեռների և հարևան երկրների մասին, ինչպես նաև Բաբելի ապստամբության պարտության և նրա մահապատժի վերաբերյալ: Այդ աշխատությունը հեղինակն ավարտել է մահվանից քիչ առաջ¹:

Որպես հեղինակ Մասուդին աչքի է ընկնում հետաքրքրությունների խորությամբ և բազմազանությամբ: Նա իր աշխատությունները շարադրել է այնպես, որ դրանք հասանելի լինեն ընթերցող լայն շրջանների համար: Նրա աշխատություններն իրենցից ներկայացնում են յուրատեսակ պատմաաշխարհագրական հանրագիտարաններ: Մասուդին հավասարապես հետաքրքրվել է թե՛ օտար երկրների և ժողովուրդների պատմությամբ, թե՛ աշխարհագրությամբ, թե՛ ժողովուրդների սովորույթներով և թե՛ երկրների հարստություններով: Նա օգտվել է օտար երկրներ կատարված արշավանքներին մասնակցած արաբ զինվորների, բազմաթիվ երկրներում եղած առևտրականների և ծովայինների պատմություններից, ըստ որում՝ բոլոր այդ պատմությունների նկատմամբ ունենալով քննական մոտեցում: Որպես շատ ճանապարհորդած անձնավորություն, նա շատ հաճախ մանրամասնորեն պատմում է իր տեսածն ու լսածը, իր տպավորությունները կոնկրետ երկրի կամ ժողովրդի մասին: Նա հազվադեպ է հիշատակում իր աղբյուրները, ուստի նաև մեծ հետաքրքրություն է ներկայացնում այն հարցը, թե ի՞նչ աղբյուրներից է նա օգտվել: Ներկայումս կարծում են, որ նա օգտագործել է մոտավորապես 165 գրավոր աղբյուր, այդ թվում Պլատոնի, Արիստոտելի և Պտղոմեոսի աշխատությունները:

¹ St'ou al-Masoudi, D.M. Dunlop, -Extract from the Encyclopaedia of Islam CD-ROM Edition v. 1.0, © 1999 Koninklijke Brill NV, Leiden, The Netherlands (այսուհետև՝ EOI, CD-ROM), VI:784a:

**ՈՍԿՈՒ ՄԱՐԳԱԳԵՏԻՆՆԵՐ ԵՎ ԳՈՂԱՐՆԵՐԻ ՀԱՆՔԵՐ
(ՄՈՒՐՈՒՋ ԱԶ-ՁԱՅԱԲ ՎԱ ՄԱԱԴԻՆ ԱԼ-ՁԱՎԱՅԻՐ)**

«ՆԻԹԱՇՆ¹ ԵՎ ՄԱՆԹԱՇՆ² ԾՈՎԵՐԻՑ³ ԵՎ ԿԱՍԹԱՆԹԻՆԻԱՅԻ ԾՈՑԻ⁴ ՄԱՍԻՆ

(120) Նիթաս ծովը տարածվում է Լազիկա երկրից⁵ մինչև Կասթան-թինիա⁶: [Նրա երկարությունը 1100 մղոն⁷ է, իսկ լայնությունը՝ 300 մղոն]:

...Մարդիկ կան, ովքեր Մայթաս ծովն անվանում են Մայթաս լիճ: Նրա երկարությունը 300 մղոն է, իսկ լայնությունը՝ 100 մղոն...:

**ԱԼ-ԲԱԲ ՎԱԼ-ԱԲՎԱԲԻ⁸ [ՎԱՍ] ԽԱՉԱՐԱԿԱՆ [ԵՎ ԿԱՍ] ՋՈՒՐՁԱՆԻ⁹ ԾՈՎԻ
ՄԱՍԻՆ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ԾՈՎԵՐԸ
ԴԱՍԱԿԱՐԳԵԼՈՒ ՀԱՄԱՐ**

(121) Ալ-Աաջմների¹⁰ ծովը¹¹, որի ափերին են գտնվում նրանց (իմա՝ աաջմների) քաղաքներն ու տները, բոլոր կողմերից բնակեցված է մարդ-

¹ Կամ Նիթաս: Խոսքը Սև ծովի մասին է (տե՛ս Bahr Buntus, D.M. Dunlop, EOI, CD-ROM, I:927a):

² Կամ Մայթաս: Մայթասը կամ Մայուտիսը Ազովի ծովն է (տե՛ս Bahr Mayutis, D.M. Dunlop, EOI, CD-ROM, I:933b): Մասուդու երկի այս հատվածում սխալ կա: Նա իր երկի հետագա շարադրանքում նշում է, որ այդ ծովի վրա է գտնվում ալ-Կասթանթինիա ծոցը, այսինքն՝ Բոսֆորի նեղուցը: Իսկ վերջինը Սև ծովի վրա է, որը կոչվում էր Նիթաս: Պետք է նշել, որ Մասուդին երբեմն միմյանց հետ շփոթում է Մայթասն ու Նիթասը:

³ Ծան. 1. «Նիթաս ծով և Մայթաս»: Ավելի ճիշտ են Նիթաս և Մայթաս ձևերը (տե՛ս Bahr Buntus, D.M. Dunlop, EOI, CD-ROM, I:927a Bahr Mayutis, D.M. Dunlop, EOI, CD-ROM, I:933b): Այսուհետև՝ Նիթաս և Մայթաս:

⁴ Իմա՝ Կոստանդնուպոլիսի ծոց, այսինքն՝ Բոսֆորի նեղուց:

⁵ Իմա՝ Եգեթք: Այդ ազգագավառը տարածվում էր ճորոխ գոտի ստորին հոսանքի ավազանում (տե՛ս Երեմյան Ս., Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, Երևան, 1963, էջ 50):

⁶ Իմա՝ Կոստանդնուպոլիս:

⁷ Մեկ մղոնը հավասար է 1917,6 մ-ի (տե՛ս Մանանդյան Հ., Երկեր, հ. 2, Երևան, 1985, էջ 185):

⁸ Բառացի՝ Դռների դուռ: Արաբներն այդպես էին անվանում Դարբանդը (տե՛ս Derbend, H. Carreere-d'Encausse, EOI, CD-ROM, II:206a):

⁹ Կամ Վրկան: Այդ երկիրը զբաղեցնում էր Կասպից ծովի հարավարևելյան ափամերձ շրջանները (տե՛ս Gurgan, R. Hartmann, J.A. Boyle, EOI, CD-ROM, II:1141a): Ջուրջանի ծովը Կասպից ծովն է:

¹⁰ Բառացի՝ օտար, այսինքն՝ ոչ արաբ: Թերևս, խոսքը պարսիկների մասին է:

¹¹ Իմա՝ Կասպից ծով:

կանցով և կոչվում է ալ-Բաբ վալ-Աբվաբի, Խազարական, Ջիլի¹, [և Դայլամի]², Ջուրջանի կամ Թաբարստանի ծով³: Այս ծովի ափին բնակվում են մի քանի թուրքական ցեղեր: Այն մի կողմից տարածվում է մինչև Խավարազն երկիրը⁴: Նրա երկարությունը 800 մղոն է, իսկ լայնությունը՝ 600 մղոն, և կիսաշրջանի տեսք ունի: Մեր գրքում մենք դեռ ներկայացնելու ենք այս ծովի ափին բնակվող ցեղերի նկարագրությունը: Այս ծովը, որը մենք կոչում ենք ալ-Աաջմների ծով, լի է վիշապներով⁵, որոնք բազմաթիվ են նաև Ռունի⁶ ծովում⁷, Վիշապներ շատ կան նաև Թարաբուլում⁸ և Լադիկիա⁹ երկրներում:

...(125) Նիթաս և Մայթաս ծովերը պետք է, որ մեկ ծով լինեն, չնայած, որ [այդ] ծովը մի քանի տեղերում նեղանում է և նեղուցի նման մի բան է ստեղծվում երկու ջրերի միջև: Այն իրողությունը, որ ավելի ջրառատ ու լայն հատվածը կոչվում է Մայթաս, իսկ ավելի նեղ ու սակավաջուր հատվածը՝ Նիթաս¹⁰, չպետք է խանգարի Մայթաս և Նիթաս ծովերին մեկ անվան տակ հանդես գալու: Ես իմ գրքում մի քանի անգամ օգտագործել եմ Մայթաս և Նիթաս անվանումները՝ երկու անվանումներից յուրաքանչյուրի տակ նկատի ունենալով թե՛ Մայթասը և թե՛ Նիթասը: Ոմանք սխալվում են, երբ ասում են, թե Խազարական ծովը¹¹ միանում է Մայթաս

¹ Իմա՝ Գիլան: Նույնական է ներկայիս Գիլանին՝ Սասանյան ժամանակներից շրջանում (տե՛ս Երեմյան Ա., նշվ. աշխ., էջ 47, Gilan, B. Spuler, EOI, CD-ROM, II:1111a):

² Իմա՝ Դեյլեմ: Զբաղեցնում էր Գիլանի լեռնային հատվածը (տե՛ս Daylam, V. Minorsky, EOI, CD-ROM, II:189b):

³ Թաբարստանը կամ Թաբարիստանը հյուսիսային Պարսկաստանի՝ Կասպից ծովի հարավային ափերն զբաղեցնող հատվածն էր: Այն արևմուտքում սահմանակցում էր Գիլանին ու Դայլամին, իսկ արևելքում՝ Վրկանին (տե՛ս Tabaristan, EOI, CD-ROM, X:18b): Թաբարստանի ծովը Կասպից ծովն է:

⁴ Իմա՝ Խորեզմ: Այդ երկիր գտնվում էր Ամուդարիա գետի ստորին հոսանքում (տե՛ս Khwarazm, C.E. Bosworth, EOI, CD-ROM, IV:1060b):

⁵ Արաբ.՝ Տաննամին: Արաբական գրականության մեջ այդ բառի տակ տարբեր բաներ են հասկանում: Երբեմն այն ընկալվում է որպես ծովից դուրս եկող չար ուժ՝ փոթորիկ տեսքով, երբեմն՝ ջրում ապրող իրեշ և այլն: Խոսքը փոկերի մասին է (տե՛ս Караглов Н., նշվ. աշխ., էջ 69, ծան. 55):

⁶ Ռուն անունը առաջացել է Ղոռն անվանումից:

⁷ Իմա՝ Ղոռնեական կամ Միջերկրական ծով:

⁸ Կամ Տրիպոլի: Նավահանգիստ Լիբանանում (տե՛ս Tarabulus (or Atrabulus) al-Sham, M. Lavergne, EOI, CD-ROM, X:214a):

⁹ Կամ Լաթակիա: Մեծ նավահանգիստ Սիրիայում, որը հայտնի էր նաև միջնադարում (տե՛ս al-Ladhikiyya, N. Elisseeff, EOI, CD-ROM, V:589b):

¹⁰ Այստեղ Մասուդին սխալվում է: Պետք է ասեր հակառակը:

¹¹ Իմա՝ Կասպից ծով, որն այդպես էր կոչվում խազարների անունից:

ծովին: Խազարների երկրով և այնտեղից Մայթաս կամ Նիթաս ծովերով ռուսների և բուրղարների¹ երկրներն անցած վաճառականներից և ոչ մեկից ես չեմ լսել, թե Խազարական ծովը միանում է վերոհիշյալ ծովերից որևէ մեկին և, նույնիսկ, նրանց ծոցերից մեկին: Դրանք միանում են միայն Խազարական գետին², բայց այդ մասին կհաղորդեմ ալ-Կաբխ լեռան³, ալ-Բաբ վալ-Աբվաբ քաղաքի և Խազարական թագավորության⁴ նկարագրական գրության ժամանակ ու կպատմեմ, թե ինչպես [հիջրայի] 300 թ.⁵-ից ից հետո ռուսներն իրենց նավերով մտան Խազարական ծովը: Ես գիտեմ նաև, որ ծովերը նկարագրող հին հեղինակների մեծ մասը ասում է, որ Կասթանթինիայի ծոցը, որը դուրս է գալիս Նիթաս ծովից, միանում է Խազարական ծովին: Բայց ես չգիտեմ, թե արդյո՞ք դա հնարավոր է, և ինչի՞ վրա են նրանք հիմնվում՝ ենթադրությամբ, փաստերի՞, թե՞ չափագրության, բայց [հավանաբար] նրանք ռուսների և նրանց հարևան ցեղերի՝ նրա ափին բնակվելու պատճառով այն շփոթել են Խազարական ծովի հետ: Ես լողացել եմ այդ ծովով Ջուրջանի ծովեզերքում գտնվող Աբասթունից⁶ դեպի Թաբարստանի հողերն ու այլ երկիրներ: Ինձ հանդիպած բոլոր առևտրականներին և նավապետներին ես հարցուփորձ եմ արել այդ մասին, և նրանք բոլորը տեղեկացրել են ինձ, որ Խազարական ծովից դուրս գալու որևէ ճանապարհ չկա: Միակ ճանապարհը ռուսների անցած ճանապարհն է⁷: Աղարբայջանի⁸, ալ-Բաբ Բաբ վալ-Աբվաբի⁹, Բարդասայի¹, Դայլամի, Ջուրջանի և Թաբարստանի

¹ Բուրղարներ կամ բուլղարներ: Սրանց մի մասը վաղ միջնադարում հաստատվել էր Դանուբ, իսկ մյուսը՝ Վոլգա գետի վրա (տե՛ս Bulghar, I. Hrbek, EOI, CD-ROM, I:1304b): Այստեղ խոսքը, անկասկած, վոլգյան բուլղարների մասին է:

² Իմա՝ Վոլգա գետ:

³ Խոսքը Կովկասյան լեռների մասին է: Մասուդին երբեմն ալ-Կաբխի փոխարեն գրում է ալ-Կաբխ:

⁴ Գտնվում էր Կովկասյան լեռներից հյուսիս՝ տարածվելով մինչև Վոլգա գետի ավազանը (տե՛ս Артамонов М., История Хазар, Ленинград, 1962):

⁵ Իմա՝ մեր թվականության 912թ.: Հիջրայի թվականների համապատասխանությունը եվրոպական թվականության թվականներին տե՛ս Орбели И., Синхронистические таблицы хиджри и европейского летосчисления, М.-Л., 1961.

⁶ Աբասթունը նավահանգիստ էր Կասպից ծովի հարավարևելյան ափին (տե՛ս Abaskun, V. Minorsky, EOI, CD-ROM, I:3b):

⁷ Այդ ճանապարհի նկարագրությունը տե՛ս ստորև:

⁸ Իմա՝ Ատրպատական: Աղարբայջան կամ Աղարբայջան ձևն արաբները վերցրել են այդ երկրի պարսկերեն Ատրպատական կամ Ատուրպատական անվանումից (տե՛ս Adharbaydjan, V. Minorsky, EOI, CD-ROM, I:188b):

⁹ Ծան. 3. «Աղարբայջանից, Առանից, Բայլականից և Բարդասայի երկրից»:

բնակիչները հեռացան (126) այս [ծովի] ափերից, քանի որ երբեք այդ կողմից հարձակման չէին ենթարկվել և հնում էլ մնան բան չէր եղել: Այն, ինչ հաղորդեցինք, մեր թվարկած քաղաքներում և երկրներում հայտնի է, և ոչ ոք չի հերքում այդ, քանի որ դրա մասին լսել են բոլորը:

ՀԱՂՈՂՈՒՄ ԱԼ-ԿԱԲԻՆ ԼԵՈՒՆ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏԱՐԲԵՐ
ԺՈՂՈՎՈՐԴՆԵՐԻ՝ ԱԼԱՆՆԵՐԻ, ՄԱՐԻՐՆԵՐԻ, ԽԱԶԱՐՆԵՐԻ, ԹՈՒՐՔԱԿԱՆ
ՏԵՂԵՐԻ, ԲՐՈՒՂԱՐՆԵՐԻ, ԱԼ-ԲԱԲ ՎԱԼ-ԱԲՎԱԲԻ ԵՎ ԴՐԱՆ ՀԱՐԵՎԱՆ
ԺՈՂՈՎՈՐԴՆԵՐԻ [ԹԱԳԱՎՈՐՆԵՐԻ] ՄԱՍԻՆ

(176) Ալ-Կաբիւնը հսկա լեռ է, որը զբաղեցնում է ընդարձակ տարածություն: Այն ընդգրկում է բազմաթիվ թագավորություններ և ժողովուրդներ: Այս լեռան վրա բնակվում է 72 ցեղ², որոնցից յուրաքանչյուրն ունի իր թագավորն ու լեզուն, որը տարբերվում է մյուսներից: Այս լեռն ունի բազմաթիվ լեռնանցքներ և ձորեր: Ալ-Բաբ վալ-Աբվաբ քաղաքը գտնվում է մի լեռնանցքի վրա: Այն կառուցել է Խոսրով (Քիսրա) Անուշարվանը³: Նա կառուցել է այն այդ լեռան և Խազարական ծովի միջև: Նա կառուցեց նաև այն պարիսպը, որը մտնում է ծովի մեջ մեկ մղոն երկարությամբ, ապա ձգվում ալ-Կաբին լեռան վրայով, նրա բարձունքներով, լեռնանցքով և ձորերով 40 փարսախս, մինչև որ հասնում է Թաբարստան⁴ կոչված ամրոցին: Ամեն 3 մղոնը մեկ, կամ [դրանից ավելի] քիչ կամ շատ, կախված ճանապարհից, որի [պահպանության] համար պատրաստվել են դարպասները, Անուշարվանը [պարսպի մեջ] երկաթե դարպասներ կառուցեց: Եվ յուրաքանչյուր դարպասի մոտ բնակեցրեց մի ժողովուրդ, որպեսզի պահպանի դարպասներն ու դրանց հարևանությամբ գտնվող

¹ Իմա՝ Պարտավ: Ավերակները գտնվում են Բարդա քաղաքի մոտ (տե՛ս Հակոբյան Թ., Հայաստանի պատմական աշխարհագրություն, Երևան, 1984, էջ 236):

² Ամենայն հավանականությամբ, այս տեղեկությունը Մասուդին քաղել է հայկական աղբյուրից, քանի որ Կովկասյան լեռներում բնակվող ցեղերի ճիշտ նույն թիվը՝ 72-ը, և դրանցից յուրաքանչյուրի՝ սեփական լեզուն և թագավորն ունենալու իրողությունը, հիշատակում է Թովմա Արծրունին (տե՛ս Թովմա Արծրունի և Անանուն, Պատմութիւն տանն Արծրունեաց, բնագիրը հրատարակության պատրաստեց Վ. Վարդանյանը, Երևան, 1985, էջ 274. «Եւ մօտ առ սոցա (իմա՝ ծանաների-Ա.Ե.) կայ լեռն Կալկասու, յորում բնակեն ազգք յանենայն լեզուաց բաժանեալք, ըստ ազգս հը (իմա՝ 72) ազգացն, և կեան առանց առաջնորդի, և օրէնս անձանց ունին ամենայն ոք որ զինչ կամի...»):

³ Սասանյան արքա 531-579 թթ.:

⁴ Պետք է լինի Թաբարսարան (Թավասպարք): Տեղադրության մասին կխոսենք ստորև:

պարսպի հատվածները: Այդ ամենը արվում էր այդ լեռան հարևանությամբ բնակվող ժողովուրդներից՝ խազարներից, ալաններից, [թուրքական ցեղերից], սարիքներից ու այլ անհավատներից եկող սպառնալիքի դեմ:

Ալ-Կաբիս լեռը բարձրությամբ, երկարությամբ և լայնությամբ անցնելու համար հարկավոր է երկու ամիս և, նույնիսկ, ավելի: Նրա շուրջը բնակվում են [այնքան] ցեղեր, որոնց հաշվել կարող է միայն աստված: Ինչպես արդեն ասել ենք, լեռան լեռնանցքներից մեկը գտնվում է Խազարական ծովի և ալ-Բաբ վալ-Աբվաբի մոտակայքում, մյուսը՝ Մայթաս ծովի ափին է, որը հիշատակվել է այս գրքի նախորդ էջերում: Այդ ծովի վրա է ալ-Կասթանթինիայի ծոցը: Դրա վրա է նաև Տրաբզունդան¹, որը ծովափնյա քաղաք է, և որտեղ տարեկան մի քանի շուկաներ են բացվում, ուր առևտուր անելու են գալիս շատ ժողովուրդներ՝ մուսուլմաններ, ռումներ², հայեր, ինչպես նաև մարդիկ Քաշաք երկրից³: Երբ Անուշարվանը կառուցեց քաղաքը, որը հայտնի է ալ-Բաբ վալ-Աբվաբ անունով և պարիսպները, որոնք ձգվում էին ծովի, ցամաքի և լեռան վրա, նա այնտեղ բնակեցրեց տարբեր ժողովուրդներ իրենց թագավորներով, որոնցից յուրաքանչյուրին տվեց աստիճան, հատկացրեց ժառանգական տիրույթ և ճշտեց դրա սահմանները, (177) այնպես, ինչպես արեց Արդաշիր իբն Բաբաքը⁴ Խորասանի⁵ թագավորների վերաբերմամբ: Բարդաայի երկրի⁶ կողմերում գտնվող և իսլամական հողերի հետ սահմանակցող այս երկրներում ու վայրերում Անուշարվանի կողմից նշանակված թագավորների թվում էր Շարվան⁷ կոչեցյալը, որի թագավորություն-

¹ Իմա՛ Տրապիզոն:

² Կամ հռոմներ: Խոսքը բյուզանդացիների մասին է:

³ Խոսքը չերկեսների երկրի մասին է (տե՛ս al-Kabk, D.N. MacKenzie, EOI, CD-ROM, IV:345b):

⁴ Իմա՛ Սասանյան Պապակի որդի Արտաշիր արքա (226-241) (տե՛ս Sasanids, M. Morony, EOI, CD-ROM, IX:70b):

⁵ Խորասանը ընդգրկում էր ներկայիս Իրանի հյուսիսարևելյան հատվածը, ինչպես նաև Կենտրոնական Ասիայի և Աֆղանստանի որոշ հատվածներ (տե՛ս Kurasan, G. E. Bosworth, EOI, CD-ROM, V:55b):

⁶ Մասուդին, Բարդաայի երկիր ասելով, նկատի ունի Մեծ Հայքի երկու աշխարհները՝ Արցախը և Ուտիքը, որոնք արաբ հեղինակները հիշատակում են Առան անունով (տե՛ս Եղիազարյան Ա., Արմինիա ոստիկանությունը (պատմա-աշխարհագրական ուսումնասիրություն), պատմ. գիտ. թեկնածուի գիտ. աստիճանի հայցման ատենախոսություն, Երևան, 2006, էջ 36-37):

⁷ Իմա՛ Շիրվան:

նը¹, նրա անվանը համապատասխան, կոչվում է Շարվան-շահ: Այստեղ իշխող ամեն թագավոր կոչվում է Շարվան: Նրա թագավորությունը ներկայումս, իսկ այժմ [հիջրայի] 332 թ.-ն է², [մի ժայրից մյուսը] տարածվում է մեկ անսվա ճանապարհաչափ³, այն պատճառով, որ նա գրավել է երկրներ, որոնք Անուշիրվանը չէր նախատեսել նրա համար, բայց նա միացրել է դրանք իր տիրույթներին: Ներկայումս թագավորում է, աստված [ավելի լավ] գիտի, Մուհամմադ իբն Յազիդ⁴ անունով մի մուսուլման, որը, անկասկած, սերում է Բահրամ Ջուրից⁵: Նմանապես Բահրամ Ջուրից է սերում Սարիրի⁶ թագավորը: Խորասանի ներկայիս տիրակալը նույնպես Իսմայիլ իբն Ահմադի ժառանգն է, իսկ Իսմայիլը սերում է նույն Բահրամ Ջուրից, ինչպես մենք ցույց ենք տվել մեր [գրքի] տոհմածառերի

¹ Պատմական Շիրվանը տարածվում էր ներկայիս Շաքրան-չայի և Գելգենի-չայի միջև: Այն VI դ.-ից հայտնի էր իբրև առանձին իշխանություն (տե՛ս Երեմյան Ս., նշվ. աշխ., էջ 74): IX դ. երկրորդ կեսին Շիրվանի իշխանությունն աստիճանաբար սկսում է տարածվել Կուր գետի և Կասպից ծովի միջև ընկած տարածքների վրա (տե՛ս Тер-Гевондян А., Армения и арабский халифат, Ереван, 1977, էջ 158): Այդ ժամանակ արևմուտքում Շիրվանի իշխանությունը տարածվում էր մինչև ներկայիս Գյոկ-չայ գետի ավազանը (տե՛ս Минорский В., նշվ. աշխ., էջ 115-116):

² Իմա՛ մեր թվականության 943թ.:

³ Մեկ օրվա ճանապարհը հավասար էր 5-7 փարսախի: Մեկ փարսախը 5752,8 մետր էր (տե՛ս Մանանդյան Յ., Երկեր, հ. 2, էջ 185), այսինքն՝ մեկ օրվա ճանապարհը կազմելու էր 30-40 կմ (տե՛ս Караулов Н., նշվ. աշխ., թիվ 29, Тифлис, 1901, էջ 59, ծանոթ. 21): Մեկ անսվա ճանապարհը հավասար էր մոտ 150-200 փարսախի (800-1100 կմ):

⁴ Շիրվանի Շայբանի արաբական ցեղին պատկանող Մուհամմադ իբն Յազիդ ամիրան 859 թ. խալիֆայությունից կիսանկախ վիճակ էր ձեռք բերել (տե՛ս Минорский В., նշվ. աշխ., էջ 47, 155): Տեքստում հիշատակվող Մուհամմադ իբն Յազիդը նրա սերունդներից էր:

⁵ Իմա՛ Վահրամ Չուբին: Պարսկական բանակի անվանի զորավարներից մեկն էր, որը 590 թ. Ամուդարիա գետի ափին ջախջախեց թյուրքական 300 հզ. բանակն ու նկայական ավար ձեռք բերեց: Այդ փայլուն հաղթանակով պսակված զորավարը սկսեց ձգտել Սասանյանների գահին և ապստամբություն բարձրացրեց Որմիզդ IV արքայի (579-590) դեմ: Այդ ժամանակ պարսից ավազանին գահընկեց արեց Որմիզդ արքային և գահին նստեցրեց նրա որդի Խոսրովին: Վերջինս պարտություն կրեց Չուբինից ու ապաստանեց Բյուզանդիայում: Բյուզանդիայի կայսր Մորիկին (582-602) կատարելով տարածքային մեծ զիջումներ Չայաստանում, Վիրքում ու Չյուսիսային Միջագետքում (տե՛ս «Պատմութիւն Սեբեոսի», աշխատասիրությանը Գ. Աբգարյանի, Երևան, 1979, էջ 84, Թովմա Արծրունի և Անանուն, էջ 140), Խոսրովը ստացավ նրա լուրջ ռազմական օգնությունն ու կարողացավ պարտության մատնել Վահրամ Չուբինին: Այս Խոսրովը պատմությանը հայտնի Խոսրով Փարվեզն է (591-628):

⁶ Սարիրի մասին մանրամասնորեն կխոսենք ստորև:

բաժնում¹: Մուհամմադ իբն Յագիդ Շարվանցին գրավեց ալ-Բաբ վալ-Աբվաբ քաղաքն իր փեսա Աբդ ալ-Մալիբ իբն Յիշամի մահից հետո, որն անսարներից² մեկի ժառանգն էր և տիրում էր ալ-Բաբ վալ-Աբվաբը: Նրանք հաստատվել էին այս վայրում այն ժամանակ, երբ Մասլամա իբն Աբդ ալ-Մալիբը³ և իսլամի այլ իշխաններ մուտք գործեցին այստեղ:

Ալ-Կաբիս լեռան մոտակայքում Շարվան թագավորությանը սահմանակցում է մեկ այլ թագավորություն, որը կոչվում է ալ-Իրան⁴, իսկ նրա թագավորը՝ ալ-Իրան-շահ: Այժմ, մեր օրերում, այս թագավորությունը, ինչպես նաև Մուկանիա կոչվող թագավորությունը, տիրում է Շարվանը⁵:

Նրա թագավորության պատվարն ալ-Լաքզի թագավորությունն է⁶: Այդ Այդ մեծաքանակ ժողովուրդն ապրում է լեռան վերին մասերում: Նրանց

¹ Խոսքը, հավանաբար, Մասուդու մյուս աշխատություններից մեկի մասին է:

² Սրանք Սադիմայի այն բնակիչներն են, ովքեր առաջինն ընդունեցին իսլամն ու նպաստեցին դրա տարածմանը (տե՛ս al-Ansar, W. Montgomery Watt, EOI, CD-ROM, I, 514a):

³ Մասլամա իբն Աբդ ալ-Մալիբը որոշ ընդմիջումներով Արմինիայի, Ասրպատականի և Ջագիրայի (իմա՛ կղզի, խոսքը Յյուսիսային Միջագետքի մասին է) փոխարքա է եղել 709-732 թթ. (տե՛ս Тер-Гевондян А., նշվ. աշխ., էջ 272-273):

⁴ Պետք է լինի Լիրան: Այն հյուսիսում սակմանակցում էր Շիրվանին, իսկ հարավում՝ տարածվում մինչև Կուր-երասխյան ջրկիցն ու Մուղանի դաշտավայրը (տե՛ս Jacut's Geographisches Wörterbuch aus den Handschriften zu Berlin, St. Petersbourg und Paris herausgegeben von Ferdinand Wüstenfeld, Leipzig, 1924, B. I, էջ 439, al-Ishtakhri, Kitáb masâlik al-mamâlik.-BGA, editio III, p. I, Lugd. Bat., 1967, էջ 193, ժամոթ. a): Լիրանի այսպիսի տեղադրությունը ցույց է տալիս, որ այն, թերևս, նույնական էր Լփնաց երկրին (Լփինք), որը տեղադրվում է նույն տեղում (տե՛ս Հարությունյան Բ., «Լփինքի տեղադրության հարցի շուրջը»,-«Բանբեր Երևանի Համալսարանի», 1981, թիվ 1, էջ 108-124, Եղիազարյան Ա., Արմինիա ոստիկանությունը..., էջ 47-50):

⁵ Իմա՛ Մուղանի կամ Մովկան դաշտավայրը (տե՛ս Երեմյան Ա., նշվ. աշխ., էջ 71):

⁶ Վ. Մինորսկին ճիշտ կերպով կարծում է, որ ալ-Լաքզն ընդհանրական անվանում անվանում էր ու արաբ հեղինակների կողմից տրվում էր Հարավային Դաղստանի ցեղերին (տե՛ս Минорский В., նշվ. աշխ., էջ 112, ժամոթ. 14), իսկ Ա. Տեր-Ղևոնդյանը լաքզերին նույնացնում է ներկայիս լեզգիների հետ (տե՛ս Տեր-Ղևոնդյան Ա., Հայաստանը VI-VIII դարերում, Երևան, 1996, էջ 156): Դատելով արաբ հեղինակների հաղորդումներից՝ ալ-Լաքզ անվանումը նրանք երբեմն տալիս էին Դաղստանի բոլոր լեռնականներին և, երբեմն, դրանցից ոմանց: Մասուդին պատմում է, որ լաքզերը մեծ ցեղ են, որոնց մեջ մտնում է նաև Դուղանիյան (Դիդոյք), իսկ Յակուտը հաղորդում է, որ լաքզերը մեծաքանակ ժողովուրդ են և բաղկացած են շատ ցեղերից (տե՛ս Jacut, I, էջ 438): Ալ-Լաքզ անվանմունը, ամենայն հավանականությամբ, արաբները վերցրել էին լակերի երկրի հայերեն անվան (լակք կամ լեկք) հոգնակի հայցական «Լակս» ձևից և, հարմարեցնելով արաբերենին, ստացել «ալ-Լաքզ»-ը (տե՛ս Եղիազարյան Ա., Յեր

մեջ կան Շարվանի թագավորին չենթարկվող անհավատներ, որոնք կոչվում են հեթանոս Դուդանիյա¹ և չեն ենթարկվում ոչ մի արքայի: Նրանց մասին հետաքրքիր տեղեկություններ կան, թե ինչպե՞ս են նրանք իրենց պահում ամուսնական ու առևտրական գործերում:

Այս լեռն ունի ձորեր, լեռնանցքներ ու անցումներ, որտեղ բնակվում են [տարբեր] ցեղեր՝ իրենց երկինք հասնող լեռների զառիվայրության ու անմատչելիության, թավուտ և անանցանելի անտառների, թփուտների և բարձունքներից ու ամեհի ժայռերից գահավիժող գետերի պատճառով [մինյանցից կտրված և] մինյանց մասին անտեղյակ: Վերոհիշյալ անձնավորությունը, որը հայտնի է (178) որպես Շարվան, այս լեռան վրա նվաճել է բազմաթիվ թագավորություններ, որոնք խոսրով Անուշարվանը հատկացրել էր իր կողմից այստեղ նշանակված այլ թագավորների: Նրանցից Մուհամմադ իբն Յազիդն իր թագավորությանը միացրեց Խրասան-շահը² և Ջադան-շահը³: Մենք հետո կպատմենք, թե ինչպե՞ս Մուհամմադն ուժով նվաճեց Շարվանը [և մյուս թագավորությունները], իսկ դրանից առաջ նա և նրանից առաջ՝ նրա հայրը, տիրում էին միայն ալ-Իրանը:

Շարվանի հարևանությամբ՝ լեռներում, գտնվում է Թաբարստանցիների թագավորությունը⁴: Ներկայումս այնտեղի թագավորը մուսուլման է՝ այն Աբդ ալ-Մալիքի քրոջ որդին, որն ալ-Բաբ վալ-Աբվաբի իշխանն էր: Նրանք ալ-Բաբ վալ-Աբվաբին ամենամոտ [բնակվող] ցեղն են:

(Խուայյ)-Դարբանդ (Բաբ ալ-Աբվաբ) ճանապարհն ըստ արաբ աշխարհագետ ալ-Մուկադդասուլ,-«Պատմա-բանասիրական հանդես», 2005, թիվ 3, էջ 156-157):

¹ Դուդանիյան նույնական է դիդոյների ցեղի երկրին՝ Դիդոյքին, որ զբաղեցնում է Անդյան Կոյսու գետի ակունքների շրջանը (տե՛ս Երեմյան Ս., նշվ. աշխ., էջ 49):

² Թերևս, ճիշտը Խուրսան-շահն է: Արաբ հեղինակները Խուրսան կամ Խայզան երկիրը հիշատակում են Շիրվանի հարևանությամբ (տե՛ս 240 ص القاهرة، ١٩٥٦، كتاب فتوح البلدان، ١، بلادري، 243, Ibn Khordâdbeh, Kitâb al-masâlik wa'l-mamâlik.-BGA, editio II, p. VI, Lugd. Bat., 1967, էջ 122): Այն, ամենայն հավանականությամբ, նույնական է հայկական սկզբնաղբյուրների Խարվանին (տե՛ս «Աշխարհացոյց Մովսեսի Խորենացույ յաւելուածովք նախնեաց», Կրատ. Ա. Սուքրեան, Վենետիկ, 1881, էջ 27): Վերջինը տարածվում էր Գիլգիլ-չայ և Սունգայիթ գետերի միջև (տե՛ս Երեմյան Ս., նշվ. աշխ., էջ 56):

³ Պետք է լինի Ջիդան-շահ: Դրա մասին կխոսենք ստորև:

⁴ Պետք է լինի Թաբարսարանի թագավորություն: Գտնվել է այնտեղ, ուր այսօր էլ բնակվում են թաբասարանները, այսինքն՝ Ռուբաս գետի վերին ու միջին հոսանքի ավազանում (տե՛ս Этноческая карта Дагестанской АССР, «Народы мира», этнографические очерки, «Народы Кавказа», т. I, Москва, 1960, էջ 416, քարտեզ: Հմմտ. «История, география и этнография Дагестана 18-19 вв.», архивные материалы, Москва, 1958, էջ 86-87, 102-107, 150-154, 197-199, 311-317):

Ալ-Բաբ վալ-Աբվաբից հետո սկսվում է Ջիդան կոչվող թագավորությունը¹, որի ժողովուրդը մտնում է Խազարական թագավորության կազմի մեջ: Նրա նայրաքաղաքն ալ-Բաբից 8 օրվա ճանապարհ հեռավորությամբ գտնվող Սամանդար քաղաքն էր², որն այսօր էլ բնակեցված է Խազարական ցեղով: Սակայն, քանի որ այն իսլամի սկզբնական շրջանում նվաճվել էր Սուլայման իբն Ռաբիա ալ-Բահիլիի³ կողմից, թող աստված նրանից գոհ լինի, թագավորանիստն այդտեղից տեղափոխվել է Ամալ քաղաքը⁴: Դրա և առաջինի միջև հեռավորությունը 7 օր է: Աթիլը, որտեղ այժմ ապրում է Խազարական թագավորը, թուրքերի երկրի⁵ լեռնային մասերից բխող մեծ գետով⁶ բաժանվում է 3 մասի: Բուրդարների երկրի մերձակայքում այդ գետից մի ճյուղ է առանձնանում և թափվում Մայթաս ծովը: Այս քաղաքը (իմա՝ Աթիլ-Ա.Ե.) տարածվում է գետի 2 ափերին: Գետի մեջտեղում մի կղզի կա, որտեղ գտնվում է թագավորանիստը: Թագավորի դղյակը գտնվում է կղզու մեջտեղում, որը լաստանավերով միացված է ափերից մեկին: Այս քաղաքում բնակվում են մուսուլմաններ,

¹ Կ. Մինորսկին Ջիդան անվանումն առաջարկում է կարդալ Խայդակ, որը հավանական է: Դրա օգտին է այդ անվանումների արաբերեն գրեթեմերի մնանությունը (خيداق-خيدان): Խայդակը կայտակների ցեղի անվան աղավաղումն է, իսկ կայտակները բնակվում են Դարբանդից հյուսիս՝ Դարբախ, Բողան, Յենդի-չայ և Բաշլի-չայ գետերի ավազաններում, Կասպից ծովի ափին (տե՛ս Минорскан В., նշվ. աշխ., էջ 126-127):

² Սամանդար քաղաքը տեղադրվում է ներկայիս Մախաչկալա քաղաքից հարավ՝ Թարքի բնակավայրի տեղում (տե՛ս Еремян С., Моисей Каланкатуйский о посольстве албанского князя Вараз-Трдата к хазарскому хакану Алп-Илитверу, -Записки института востоковедения АН СССР, т. VII, 1939, էջ 142-143, տե՛ս նաև Երենյան Ա., Հայաստանը և հարևան երկրները 855-953թթ., քարտեզ, Երևան, 1976):

³ Իմա՝ Սալման իբն Ռաբիա: Արաբ այս գորավարը 655 թ. նվաճեց Հայոց Արևելից կողմերը և Աղվանից աշխարհը (տե՛ս بلاذري, I, էջ 240-241, al-Kufi, Kitāb'l-futūh, II, Hyderabad, 1969, էջ 113-114):

⁴ Կ. Մինորսկին կարծում է, որ այստեղ սխալ կա, պետք է լինի Աթիլ: Թերևս, հեղինակը Աթիլ քաղաքը շփոթել է Սագանդարանի Ամոլ քաղաքի հետ, ինչը հավանական է (տե՛ս Минорский В., նշվ. աշխ., էջ 192, ծանոթ. 18): Խնդիրն այն է, որ Մասուդին Ամալ քաղաքի մասին հաղորդում է նույն տեղեկությունը, ինչ որ ալ-Իսբախրին՝ Աթիլի մասին (տե՛ս al-Istakhri, էջ 220): Աթիլը Խազարական թագավորության մայրաքաղաքն էր, որը գտնվում էր Վոլգա գետի ստորին հոսանքում: Ճշգրիտ տեղադրությունն անհայտ է (տե՛ս Atil, D.M. Dunlop, EOI, CD-ROM, I:738a): Այսուհետև տեքստում Ամալի փոխարեն կտանք Աթիլ ձևը:

⁵ Դատելով Մասուդու հետագա շարադրանքից, «թուրքերի երկիր» ասելով նա նկատի ունի բուրթաս ցեղի երկիրը:

⁶ Հավանաբար, Վոլգա գետը, որը Աթիլ քաղաքի անունից կոչվում էր Աթիլ (տե՛ս Itil, B. Spuler, EOI, CD-ROM, IV:280a):

քրիստոնյաներ, հրեաներ և հեթանոսներ: Թագավորը, նրա շրջապատը և նրա տոհմի խազարները հրեաներ են¹: Թագավորը հուդայականություն է ընդունել խալիֆա Չարուն ար-Ռաշիդի օրոք²: Որոշ հրեաներ նրա մոտ են եկել այլ մուսուլմանական երկրներից ու Ռումի երկրից³: Պատճառն այն է, որ ներկայումս գահակալող կայսրը [հիջրայի 332 թ., կայսրն Արմանուն է]⁴ (179) իր երկրի հրեաներին ստիպեց դառնալու քրիստոնյա...: Շատ հրեաներ Ռումի երկրից փախան խազարական թագավորություն, որի մասին [արդեն] գրել ենք...:

Ինչ վերաբերում է այդ թագավորությունում բնակվող հեթանոսներին, ապա նրանց մեջ կան սակալիքաներ և ռուսներ⁵, որոնք ապրում են այդ քաղաքի (Աթիլի) մի մասում: Նրանք այրում են իրենց մեռելներին նրանց անասունների⁶, զենքերի և զարդարանքների հետ միասին: Երբ մեռնում է է տղամարդը, նրա կնոջը կենդանի-կենդանի այրում են նրա հետ, իսկ եթե մեռնում է կինը, ամուսնուն չեն այրում: Եթե ամուրի է մահանում, նրան ամուսնացնում են մահից հետո: Կանայք մեծ ցանկություն ունեն այրվելու ամուսնու հետ, որպեսզի նրանց հոգիների հետ մտնեն դրախտ...:

Այս երկրի [բնակչության] մեծամասնությունը մուսուլմաններ են, և նրանցից է կազմվում արքայի զորքը: Նրանք այդ երկրում հայտնի են ալ-Լարսիա անունով⁷ և եկել են խավարազմ երկրից: Հին ժամանակներում, իսլամի հայտնվելուց հետո, նրանց երկրում պատերազմ սկսվեց ու ժանտախտ տարածվեց, և նրանք տեղափոխվեցին խազարական արքայի երկիրը: Նրանք քաջարի են և թագավորի գլխավոր հենարանը մղվող

¹ Նկատի ունի այն, որ նրանք ընդունել էին հուդայականությունը:

² խալիֆա է եղել 786-814 թթ.:

³ Իմա՛ Բյուզանդական կայսրություն:

⁴ Հիջրայի 332 թ., այսինքն՝ մեր թվականության 943 թ. Բյուզանդիայի կայսրը Հայկական կամ Մակեդոնական հարստության (867-1056) ներկայացուցիչ Կոստանդին VII Ծիրանածինն էր (913-959): Մասուդին նրան Արմանու է կոչում, անկասկած, նրա հարստության անունով: «Արմանուս» կնշանակի «հայ»:

⁵ Իմա՛ Սլավոն: Սակայն, արաբները «սակալիքա» բառի տակ հասկանում էին նաև Հյուսիսային Եվրոպայի շիկահեր ժողովուրդներին, դրա համար էլ Մասուդին այստեղ սակալիքաներից առանձնացնում է ռուսներին (տե՛ս al-Sakaliba, P. Guichard, Mohamed Meouak, EOI, CD-ROM, VIII:872b):

⁶ Խոսքը, հավանաբար, ձիերի մասին է:

⁷ Վ. Մինորսկին կարծում է, որ ալ-Լարսիա անվան տակ պետք է տեսնել ալանների ցեղը, որը սկզբում բնակվում էր Արալյան ծովից հարավ: «Լարսիա» կամ «Արսիա» անունը շատ նման է հնչում ալանների հին «արոսի» անվանը, որը պարսկերենում դարձել է «աս», իսկ վրացերենում՝ «ուսեթի», որտեղից էլ՝ առաջ է եկել ռուսերեն «ուսեթին» անվանումը (տե՛ս Минорский В., նշվ. աշխ., էջ 193, ծան. 23):

պատերազմներում: Նրանք մնացին նրա երկրում պայմանով, որ առաջին՝ ազատորեն կղավանեն իրենց կրոնը, երկրորդ՝ կունենան իրենց մզկիթներն ու ազանը¹, և երրորդ՝ թագավորի վազիրը² լինելու էր նրանցից: Այժմ վազիրը նրանցից է՝ Ահմադ իբն Քուլաիը: Երբ արքան պատերազմ է մղում մուսուլմանների դեմ, նրանք կանգնում են նրա զորքի մեջ առանձին և չեն կռվում հավատակիցների դեմ, բայց անհավատների դեմ արքայի [մղած] պատերազմներում նրանք մարտնչում են: Ներկայումս նրանցից 7 հզ. հոգի թագավորի հեծյալ զորքն է [կազմում], զինված է նետ ու աղեղով, հագած սաղավարտ և զրահ: Նրանց մեջ կան նաև մի-զակակիրներ, որոնք զինված են այնպես, ինչպես մուսուլմանները: Նրանք ունեն նաև մուսուլմանական դատավորներ: Խազարական մայրաքաղաքում սովորույթ կա, որ պետք է լինի 7 դատավոր³, նրանցից երկուսը՝ մուսուլմանների, երկուսը՝ խազարների, ովքեր դատում են Տուրա-յի⁴ համաձայն, երկուսը՝ քրիստոնյաների, ովքեր դատում են Ավետարանի Ավետարանի համաձայն⁵, (180) իսկ մեկը՝ սակալիբների, ռուսների և մյուս հեթանոսների համար, որոնք դատում են հեթանոսության համաձայն, այսինքն՝ բանականությամբ: Երբ մեծ կարևորություն ունեցող դեպք է տեղի ունենում, որի մասին [այս վերջին] դատավորը որոշում կայացնել չի կարողանում, նրանք հավաքվում են մուսուլման դատավորների մոտ, գործն հանձնում նրանց դատին և ենթարկվում նրանց որոշմանը, և նրանք որոշումը կայացնում են շարիաթի⁶ համաձայն: Արևելքի այս երկրների մեջ միայն խազարական արքան ունի վարձկան զորք: Այդ երկրի բոլոր մուսուլմանները կոչվում են ալ-Լարսիա:

Ռուսներն ու սակալիբները, որոնք, ինչպես հիշատակել ենք, հեթանոսներ են, [նույնպես] ծառայում են արքայի բանակում և նրա հպատակներն են: Նրա երկրում, բացի ալ-Լարսիայից, կան նաև բազմաթիվ մուսուլման արհեստավորներ ու առևտրականներ, որոնք այդ երկիր են տեղափոխվել այնտեղ տիրող արդարության և անվտանգության պատ-

¹ Իմա՝ աղոթքի կանչ-հրավերը:

² Իմա՝ վեզիր կամ արքունի գլխավոր պաշտոնյա:

³ Ըստ Յակուտի, դատավորները ոչ թե 7-ն էին, այլ 9-ը (տե՛ս Jacut, II, էջ 436):

⁴ Իմա՝ Տորա: Խոսքը Մովսեսի հնգամատյանի մասին է, այսինքն՝ Աստվածաշնչի Հին կտակարանի առաջին հինգ գրքերի (տե՛ս ТОРА, -Большая энциклопедия Кирилла и Мефодия, 2004):

⁵ Արաբ.՝ Ինջիլ:

⁶ Իմա՝ իսլամի օրենքները:

ճառով: Այնտեղ կա մի մզկիթ՝ մինարեթով¹, որն արքայի պալատից բարձր է: Կան նաև այլ մզկիթներ, որոնցում գործող դպրոցներում երեխաներին Ղուրան են դասավանդում: Եթե մուսուլմաններն ու քրիստոնյաները միանան, արքան նրանց դեմ ոչինչ անել չի կարողանա:

Այն, ինչ պատմեցինք, վերաբերում էր ոչ թե խազարական արքային, այլ խականին²: Իրականում խազարական թագավորությունում կա խական, որն օրենքով գտնվում է թագավորի ենթակայության ներքո և ապրում նրա պալատում: Խականը ապրում է պալատում և չի կարող ո՛չ դուրս գալ, ո՛չ երևալ ազնվականներին (խաս) ու հասարակ ժողովրդին (ամա) և ո՛չ էլ լքել իր բնակարանը, որտեղ նրա հետ ապրում է նաև նրա կինը³: Նա հրամաններ չի արձակում և թագավորության գործերում որոշումներ չի ընդունում: Բայց արքան չէր կարողանա ինչպես պետք է խազարական թագավորությունը կառավարել, եթե նրա կողքին պալատում չլիներ խականը: Երբ խազարական թագավորության մեջ սով է սկսվում կամ այլ արհավիրք պատահում, կամ այլ ժողովրդի հետ պատերազմ է սկսվում, կամ որևէ [այլ] դժբախտություն է պատահում երկրում, ազնվականները և ժողովուրդն ամբոխով գնում են արքայի մոտ և ասում. «Մենք մեր դժբախտությունը կապում ենք խականի հետ: Սպանի՛ր նրան կամ տու՛ր մեզ, որպեսզի մենք նրան սպանենք»: Երբեմն նա խականին հանձնում է նրանց, և նրանք սպանում են նրան, երբեմն նա ինքն է սպանում նրան, իսկ երբեմն էլ՝ խղճում է նրան ու պաշտպանում, այն դեպքում, եթե նա որևէ հանցանք կամ մեղք չի գործել, որի համար արժանի լիներ պատժի:

Զգիտեն, հի՞՞ն է խական ընտրելու սովորույթը, թե՞ նոր, բայց, քանի որ խականին ընտրում են նրանց ազնվականական ամենատոհմիկ ընտանիքի անդամներից, ես ենթադրում եմ, որ իշխանությունը նրանց է պատկանել ի սկզբանե: Աստված [ավելի լավ] գիտի:

¹ Իմա՝ մզկիթին կից աշտարակը, որտեղից ազան են կանչում:

² Խական կամ խաքան: Վերջին ձևը հիշատակում են նաև հայկական աղբյուրները (տե՛ս «Պատմութիւն Ղեւոնդեայ մեծի վարդապետի Յայոց», Ս. Պետերբուրգ, 1887, էջ 41 և այլն):

³ Ըստ Յակուտի, խականը ժողովրդին երևում էր 4 ամիսը մեկ անգամ, երբ դուրս էր գալիս պտույտի իր թագավորության մեջ (տե՛ս Jacut, II, էջ 437):

(181) Խազարներն առևտրական նավեր ունեն, որոնցով լողում են իրենց քաղաքից գետի հոսանքով դեպի վեր, հասնում մեկ այլ գետի, որը կոչվում է Բուրթաս¹...:

...(184) Ռուսները մարտնչեցին Ջիլի, Դայլամի և Իբն Աբի աս-Սաջի² զորահրամանատարներից մեկի հետ, ապա դուրս եկան Շարվանի թագավորության նավթաբեր ափը, որը հայտնի է Բաքուի³ անունով: Վերադարձին ռուսներն ափ իջան նավթաբեր երկրից մի քանի մղոն հեռավորությամբ գտնվող կղզիներում: Այն օրերին Շարվանի թագավորն էր Ալի իբն Չայասամը⁴: Նա զորք գումարեց և իր նավակներով ու առևտրական նավերով լողաց դեպի այդ կղզիները, բայց ռուսները նախահարձակ եղան, և հազարավոր մուսուլմաններ սպանվեցին ու ջրասույզ եղան: Ռուսները մի քանի ամիս մնացին այդ ծովում, և, այդ պատճառով, ժողովուրդները ծովով երկրից երկիր գնալ չէին կարողանում: Ժողովուրդը նրանցից զգուշանում էր ու միշտ պատրաստ վիճակում գտնվում [դիմակայելու նրանց], իսկ այդ ծովի շուրջը բնակվում են բազմաթիվ ժողովուրդներ: Երբ ռուսները մեծ ավար հավաքեցին ու մնանատիպ գործողությունները նրանց այլևս չէին գրավում, նրանք լողացին դեպի Խազարական գետի գետաբերանը և Խազարական թագավորի մոտ դրամով և ավարով դեսպանություն ուղարկեցին, ինչպես որ նախապես պայմանավորվել էին: Խազարների թագավորը նավեր չուներ, և նրա մարդիկ նավ վարել չգիտեին: Չլիներ այդ [իրողությունը], մուսուլմանները նրանից ավելի շատ վնաս կկրեին: Ալ-Լարսիաները և Խազարների երկրի [մյուս] մուսուլմանները իմացան, թե ինչ են արել ռուսները, և ասացին թագավորին. «Թու՛յլ տուր մեզ վրեժխնդիր լինել այդ ցեղից, որը հարձակվել է մեր մուսուլման եղբայրների վրա, հեղել նրանց արյունը, գերեզմարել

¹ Այս գետը Բուրթաս էր կոչվում համանուն գետի ավազանում բնակվող թյուրքական ցեղի անունից: Այն Վոլգա գետի վտակներից էր և նույնական էր կամ ներկայիս Կամա և կամ Սամարա գետին (տե՛ս Карынов Н., ցվ. աշխ., էջ 67, ծան. 32): Համանուն երկիրը գտնվում էր Խազարական թագավորության հյուսիսային մասում՝ Վոլգա գետի ավազանում (տե՛ս Burtas, W. Barthold, Ch. Quelquejay, EOI, CD-ROM, I:1337b):

² Ատրպատականի Սաջյան ամիրաններից (տե՛ս Sadjids, C.E. Bosworth, EOI, CD-ROM, VIII:745a).

³ Իմա՛ Բաքու:

⁴ Չայասամը Մուհամմադ իբն Յագհոյի որդին էր, որը Մուտավաքիլ խալիֆայի (846-861) մահից երկու տարի անց վերջնականապես անկախացրեց իր թագավորությունը Արաբական խալիֆայությունից: Ալին նրա որդին էր (տե՛ս Минорский В., ցվ. աշխ., էջ 47-48):

նրանց կանանց ու երեխաներին»։ Թագավորը չկարողացավ խանգարել նրանց, բայց նախազգուշացրեց ռուսներին, որ մուսուլմանները որոշել են հարձակվել նրանց վրա։ Մուսուլմանները զորք հավաքեցին և նրանց (իմա՝ ռուսներին-Ա.Ե.) հանդիպելու համար գետի հոսանքով շարժվեցին առաջ։ Երբ նրանք հանդիպեցին, ռուսները լքեցին իրենց նավերը։ Հավաքվել էր ամբողջովին զինված 15 հզ. մուսուլման հեծյալ, նրանց միացել էին նաև Աթիլ քաղաքում բնակվող որոշ քրիստոնյաներ։ Նրանց միջև ճակատամարտը տևեց երեք օր, և աստված հաղթանակ պարգևեց մուսուլմաններին։ Ռուսներից շատերին սրախողխող, մի մասին էլ՝ ջրասույզ արեցին։ Նրանցից փրկվեց մոտավորապես 5 հզ., ովքեր իրենց նավերով լողացին Բուրթաս տանող ուղղությամբ։ [Այնուհետև] նրանք թողեցին իրենց նավերը (185) և շարժվեցին ցամաքով։ Նրանց մի մասը սպանվեց բուրթասների կողմից, մյուսներն էլ ընկան մուսուլման բուրդարների ձեռքը, որոնք նույնպես կոտորեցին նրանց։ Մուսուլմանները խազարական գետի ափին մոտավորապես 30հզ. [ռուս] կոտորեցին։ Այդ տարի ռուսներն իրենց արշավանքները չկրկնեցին։

Մենք այս տեղեկությունը բերեցինք, որպեսզի հերքենք նրանց, ովքեր պնդում են, թե իբր խազարական ծովը միավորվում է Մայթասին և Մայթասով ու Նիթասով՝ Կասթանթինիայի ծոցին։ Եթե այդպես լիներ, ռուսները [խազարական ծովով] կհայտնվեին այդ ծովում (Նիթաս կամ Սև ծով), որը պատկանում է իրենց, ինչպես արդեն հիշատակել ենք։ Այս ծովի շրջակա ժողովուրդների մեջ տարակարծություն չկա այն բանի շուրջը, որ ալ-Աաջմների ծովը որևէ նեղուցով կապված չէ մեկ այլ ծովի հետ։ Այն փոքր, փակ ծով է։ Ինչ վերաբերում է ռուսների արշավանքին, ապա դրա մասին պատմությունները քաջ հայտնի են այս երկրների ժողովուրդներին։ [Դրա] թվականը նույնպես հայտնի է, այն տեղի է ունեցել [հիջրայի] 300 թ.-ից¹ հետո, բայց ճշգրիտ թվականը չգիտեն։ Հնարավոր է, որ նրանք, ովքեր ասում են, թե խազարական ծովը միանում է Կասթանթինիայի ծոցին, ենթադրում են, թե խազարական ծովը նույնական է Մայթաս և Նիթաս ծովերին, բայց վերջինը բուրդարների և ռուսների ծովն է, սակայն, աստված գիտի, թե ինչպես է իրականում...։

Նույն ծովի (իմա՝ խազարական ծով-Ա.Ե.) ափին գտնվում են Ջիլն ու Դայլաճը, և սրանց ու Աթիլի միջև լողում են առևտրական նավեր և մուտք գործում խազարական գետը։ Նրանում նավեր են լողում նաև այն վայ-

¹ Իմա՝ մեր թվականության 912թ.։

րերի միջև, որոնք մենք հիշատակել ենք [ծովի] հարավային ափին, [և որոնք տարածվում են] մինչև Բաքու, որտեղ կան սպիտակ նավթ և այլ հանքեր: Աշխարհում այլ տեղից սպիտակ նավթ չեն հանում, բայց աստված ավելի լավ գիտի: Այս վայրը գտնվում է Շարվանի թագավորության ծովափին: (186) Այս նավթային երկրում մի հրաբուխ կա, որը մշտապես գործող կրակի աղբյուր է, և նրա գազաթը միշտ ծխապատ է:

Այս ափի դիմաց, ծովում մի քանի կղզի կա, որոնցից մեկը գտնվում է ափից երեք օրվա ճանապարհի հեռավորության վրա, և այնտեղ նույնպես կա մի հսկա հրաբուխ, որը տարվա տարբեր եղանակներին սուլոց է հանում: Նրանից հսկայական կրակ է դուրս գալիս և բարձրանում ամենաբարձր լեռան չափ: Այն լուսավորում է ծովի մեծ մասը, և այդ երևույթը ցամաքից տեսանելի է համարյա 100 փարսախս հեռավորությունից: Այդ հրաբուխը նման է Սակալիա երկրի¹ Բարքան լեռանը², որը Իֆրանջայի³ հողում է՝ Մարոկկոյի⁴ հողում գտնվող Իֆրիկիա⁵ երկրից [ոչ հեռու]:

...(191) Այժմ վերադառնանք ալ-Բաբ վալ-Աբվաբի, պարսպի ու ալ-Կաբխ լեռան հարևանությանը բնակվող ժողովուրդների նկարագրությանը: Մենք [արդեն] ասել ենք, որ ամենավնասակարը [ալ-Բաբ վալ-Աբվաբի] հարևան թագավորություններից (192) Ջիդան թագավորությունն է: Նրա արքան նուսուլման է, որը հայտարարում է, թե ինքը Կահթան [ցեղ]ի արաբ է⁶: Այժմ, այսինքն՝ [հիջրայի] 332 թ.⁷, նա հայտնի է Սալիֆան անու-

¹ Իմա՝ Սիցիլիա (տե՛ս Караулов Н., նշվ. աշխ., թիվ 38, էջ 51, Минорский В., նշվ. աշխ., էջ 202):

² Vulkan բառի աղավաղումն է: Նկատի ունի Էտնա հրաբուխը Սիցիլիայում (տե՛ս Караулов Н., նշվ. աշխ., թիվ 38, էջ 72, ժան. 92, Минорский В., նշվ. աշխ., էջ 202):

³ Ֆրանկների թագավորության անվան աղավաղումն է (տե՛ս Караулов Н., նշվ. աշխ., թիվ 38, էջ 51, Минорский В., նշվ. աշխ., էջ 202):

⁴ Արաբներն այդպես էին կոչում Աֆրիկայի այն մասը, որն ընդգրկում էր Տրիպոլիտանիան, Թունիսը, Ալժիրը և Մարոկկոն: Մաղրիբը մշանակում է արևմուտք, ի տարբերություն արևելքի կամ Մաջրիկի (տե՛ս al-Maghrib, G. Yver, EOI, CD-ROM, V:1183b):

⁵ Իմա՝ Աֆրիկա: Արաբներն Իֆրիկիա էին կոչում Մաղրիբի արևելյան մասը: Այն ծագում է Provincia Africa անունից, որը տրվում էր Հռոմեական կայսրության կազմի մեջ մտնող Կարթագենի տարածքին: Իֆրիկիան հիմնականում ընդգրկում էր Թունիսը, Ալժիրի մի մասը և Լիբիայի զգալի հատվածը, սակայն, ժամանակի ընթացքում կրում էր զգալի փոփոխություններ (տե՛ս Ifrikiya, M. Talbi, EOI, CD-ROM, III:1047a):

⁶ Կահթան անվանումը պետք է կարդալ Խայդակ (Կայտակ) (տե՛ս Khazar, W. Barthold, P.B. Golden, EOI, CD-ROM, IV:1172a):

⁷ Իմա՝ 943թ.:

նով¹, և նրա թագավորության մեջ նրանից, նրա որդուց և ընտանիքից բացի այլ մուսուլմաններ չկան: Ես կարծում եմ, որ այդ անունով կոչվում են այդ թագավորության բոլոր արքաները:

Ջիդանի և ալ-Բար վալ-Աբվաբի միջև կան արաբական ծագումով մուսուլմաններ, որոնք վատ են խոսում բոլոր լեզուներով, բացի արաբերենից: Նրանք ապրում են անտառներում, թփուտներում, ձորերում և մեծ գետերի ափերին, բնակավայրերում, ուր նրանք հաստատվել են այն ժամանակ, երբ այս երկրները նվաճվեցին արաբների կողմից: Նրանք ապրում են Ջիդան թագավորության հարևանությամբ, բայց նրանից բաժանված են անտառներով և գետերով, որոնք բնական պատմեջ են կազմում [նրանց միջև]: Նրանցից մինչև ալ-Բար վալ-Աբվաբ քաղաքը 3 մղոն է, և ալ-Բարի մարդիկ [անհրաժեշտության դեպքում] նրանց օգնության են հասնում: Ջիդանի մոտ, ալ-Կաբխ լեռան և Սարիի հարևանությամբ, գտնվում է Բարզբան² կոչվող մուսուլման մի թագավոր: Նրա երկիրը կոչվում է Քարջ³, և նրա բնակիչները զինված են մահակներով: Այդ թագավորության բոլոր արքաները կոչվում են Բարզբան:

¹ Դատելով Մասուդու հետագա հաղորդումից, դա ոչ թե այդ երկրի տվյալ թագավորի անունն էր, այլ տեղի բոլոր թագավորների մականունը:

² Բարզբան կամ մարզպան: Պարսկական տիրապետության շրջանում նվաճված երկրներից կազմվում էին վարչական միավորներ՝ մարզպանություններ՝ պարսից արքունիքի կողմից նշանակված մարզպանի զխավորությամբ: Օրինակ՝ հայկական ու այսրկովկասյան հողերից կազմվել էին Հայոց, Կրաց և Աղվանից մարզպանությունները (տե՛ս Երեմյան Ս., նշվ. աշխ., էջ 118-120): Ավելի մանրամասն տե՛ս հաջորդ ծանոթագրությունը:

³ Ծան. 4. Քարախ: Վ. Մինորսկին ճիշտ ձևը համարում է Քարախը: Նա այն նույնացնում է դարգինների հողում գտնվող Ուր-Քարախ բնակավայրին, որը Դարբանդի շուրջ 60 կմ հեռավորության վրա է (տե՛ս Минорский В., նշվ. աշխ., էջ 130): Դարբանդից հյուսիս, հոսում է Դարբախ գետը, որի հյուսիս-արևմտյան ակունքը կոչվում է Բարզան: Հնարավոր է, որ այն կապ ունի Մասուդու հիշատակած Բարզբան անվան հետ: Այդ գետը հոսում է Բողան գետից ոչ հեռու, և նրա ավազանում են գտնվում Ուր-Քարախ, Դուբաչի և Մաջալիս բնակավայրերը (անդ, էջ 130, ծան. 64): Քարախի նույնացումն Ուր-Քարախ բնակավայրին միանգամայն ընդունելի է, իսկ, ինչ վերաբերում է Բարզան գետի անվանման նույնացմանը «Բարզբան» անվանը, ապա այն խիստ կասկածելի է: Ամենայն հավանականությամբ, Մասուդու հաղորդումն արտացոլում է Սասանյանների տիրապետության ժամանակաշրջանի իրողությունը, երբ գործում էր մարզպանի ինստիտուտը, իսկ, ինչ վերաբերում է արաբական տիրապետության և հետագա շրջանին, ապա մարզպան անվանումը պատմիչների կողմից այլևս չի հիշատակվում: Հավանական է, որ Քարջ անվանումը վերաբերել վրացիներին, որոնց արաբները թուրջ էին անվանում (տե՛ս Jacut, I, էջ 78, 857-859 և այլն): Այդ դեպքում խոսքը վրաց մարզպանի մասին է:

Բարզբան թագավորությունից հետո Ղումիկ կոչվող թագավորությունն է¹: Նրա քրիստոնյա բնակիչները ոչ մի արքայի չեն ենթարկվում և ունեն մի քանի առաջնորդներ: Նրանք խաղաղությամբ են ապրում Ալլան թագավորության² հետ:

Ապա, Սարիրի ու լեռների ուղղությամբ, գտնվում է Ջարիքիրան կոչվող թագավորությունը, որ[ի անունը] նշանակում է զրահի վարպետներ³, քանի որ նրանց մեծամասնությունը զրահներ, աստիճաններ, սրեր և երկաթյա այլ առարկաներ է պատրաստում: Նրանց մեջ կան տարբեր կրոններ դավանողներ՝ մուսուլմաններ, քրիստոնյաներ և հրեաներ: Նրանց երկիրն անմատչելի է և, դրանով՝ պաշտպանված հարևան ժողովուրդներից:

Հետո [Ջարիքիրանի հարևանությամբ] Սարիրի թագավորությունն է⁴, որի արքան կոչվում է Ֆիլան-շահ⁵ և դավանում է քրիստոնեություն:

¹ Ղումիկ ամրոցը, ամենայն հավանականությամբ, նույնական է ներկայիս Ղումուխ քաղաքին, որը գտնվում է լակերի երկրում (տես Երեմյան Ա., Հայաստանը և հարևան երկրները 855-953 թթ., քարտեզ, Երևան, 1976): Ուստի՝ Ղումիկ թագավորությունը նույնական է լակերի թագավորությանը, որի անունից առաջ է եկել «ալ-Լաբգ» անվանաձևը (տես Եղիազարյան Ա., Արմինիա ոստիկանությունը..., էջ 52, ծան. 2): Վերջինը գտնվում էր այնտեղ, ուր այսօր էլ բնակվում են լակերը, այսինքն՝ Ղազիղունուխյան Կոյսու գետի վերին ու միջին հոսանքի ավազանում (տես Этноическая карта Дагестанской АССР, քարտեզ):

² Իմա Ալանական թագավորություն: Տեղադրությանը կանդրադառնա՞նք ստորև:

³ Մ. Արտամոնովը և Վ. Մինորսկին, հիմք ընդունելով «Ջարիքիրան» անվան պարսկերեն թարգմանությունը, այդ երկրի ժողովրդին նույնացնում են ներկայիս Ղուբաչի ավանի բնակչության հետ, որը այսօր էլ հայտնի է իր հնամյա արհեստով: Այսինքն՝ Ջարիքիրան իշխանությունը զբաղեցնում էր Ղուբաչի քաղաքի շրջակա տարածքը (տես Артамонов М., նշվ. աշխ., էջ 229, Минорский В., նշվ. աշխ., էջ 203, ծանոթ. 71):

⁴ Սարիրի թագավորությունը գտնվում էր Անդյան ու Ավարյան Կոյսու գետերի հովիտներում: Նրա և Խազարների թագավորության միջև սահմանագիծն անցնում էր Ավարյան Կոյսու գետի և Դաղստանի դաշտավայրային մասի՝ Կասպից ծովը թափվող գետերի միջև ջրբաժան լեռնաշղթայով: Այդ լեռնաշղթայից դեպի հարավ Սարիրի արևելյան սահմանագիծը, ամենայն հավանականությամբ, անցնում էր Կարա Կոյսու և Ղազիղունուխյան Կոյսու գետերի ջրբաժանով, որը բաժանում էր Սարիրի թագավորությունը Լակերի երկրից: Սարիրի թագավորության արևմտյան սահմանագիծը, դատելով աշխարհագրական պայմաններից, անցնում էր Անդյան Կոյսուի ձախ ափին ձգվող լեռների ջրբաժան գծով, իսկ հարավում՝ Սարիրը եզերվում էր Կովկասյան լեռներով (տես Եղիազարյան Ա., Արաբական աղբյուրների Սարիրի թագավորությունը, -«Գիտության գլոբուս», 2004, հ. 4, էջ 99-106): Սարիրներն ալանական ցեղ էին, որոնք հետագայում ընկել էին այնտեղ հաստատված ավարների տիրապետության տակ (անդ, էջ 103):

⁵ Ֆիլան թագավորությունը գտնվում էր Սարիրի և Թաբարսարանի միջև՝ Կովկասյան լեռների հյուսիսահայաց լանջերին, Սարիրի հետ սահմանակցելով Ավարյան Կոյսու գետի և Դաղստանի դաշտավայրային մասի՝ Կասպից ծովը թափվող գե-

Ինչպես մենք արդեն այս գրքում հիշատակել ենք, նա սերում է Բահրան Ջուրից և կոչվում է Սահիբ աս-Սարիր¹, քանի որ վերջին Սասանյան արքա Յազդաջարդը², նահանջելով ճակատամարտից հետո, Բահրան Ջուրի ժառանգներից մեկի հետ այդ թագավորություն ուղարկեց իր (193) ոսկյա գահը, իր գանձերն ու ունեցվածքը, որպեսզի նա պահպանի դրանք մինչև իր գալուստը: Հետո Յազդաջարդը անցավ Խորասան ու սպանվեց այնտեղ Օսման իբն Աֆֆանի խալիֆայության ժամանակ³, թող աստված նրանից գոհ լինի, ինչպես մենք այս գրքում արդեն պատմել ենք: Այդ մարդը հաստատվեց այդ երկրում, գրավեց թագավորական իշխանությունը, որից հետո այնտեղի գահը ժառանգում են նրա սերունդները: Նրան սկսեցին կոչել Սահիբ աս-Սարիր, իսկ նրա մայրաքաղաքը կոչվում է Հումրաջ⁴: Նա ունի 12 հզ. գյուղ, որոնցից ստրկացնում է ուն ցանկանա: Ալ-Կաբխ լեռան լեռնանցքներից մեկում գտնվող նրա երկիրն անմատչելի է և, դրանով իսկ, պաշտպանված: Թագավորը հարձակումներ է գործում խազարների վրա և հաղթանակներ տանում, քանի որ խազարները դաշտավայրում են, իսկ ինքը՝ լեռան վրա:

Այս թագավորությունից հետո Ալլան թագավորությունն է⁵, որի արքան կոչվում է Քարթանդաջ⁶, որն ընդհանրական անվանում է այդ երկրի բոլոր

տերի միջև ջրբաժան լեռնաշղթայի հարավային հատվածով, իսկ հարավում՝ տարածվելով մինչև Ղուբաջի ավանի շրջակայքում գտնվող Ջարիքիրան թագավորությունը (տե՛ս Եղիազարյան Ա., Արմինիա ոստիկանությունը..., էջ 54): Իսկ Սարիրի տիրոջ՝ «Ֆիլան-շահ» տիտղոսը կրելու պատճառը, անեմայն հավանականությամբ, այն էր, որ նա տիրում էր նաև Ֆիլանին (տե՛ս Եղիազարյան Ա., Արմինիա ոստիկանության սահմանները, «Պատմա-բանասիրական հանդես», 2005, թիվ 1, էջ 245-246):

¹ Իմա՛ Սարիրի տիրակալ:

² Իմա՛ Սասանյան Հազկերտ Գ արքան (632-651):

³ Իշխել է 644-656 թթ.:

⁴ Ն. Կարաուլովը փորձում է Հումրաջը նույնացնել Անդյան ու Ավարյան Կոյսունքի ջրկիցի մերձակայքում գտնվող Գիմրի բնակավայրին (տե՛ս Karayotov H., Նշվ. աշխ., թիվ 38, էջ 73, ժան. 100): Սակայն, Հումրաջը նույնական է Անդյան ու Ավարյան Կոյսու գետերի միջև գտնվող Հումրատ գյուղին (տե՛ս Եղիազարյան Ա., Արաբական աղբյուրների Սարիրի թագավորությունը, էջ 102):

⁵ Ալանները ներկայիս օսերի նախնիներն են: Նրանց երկիրը տարածվում էր Կուբան գետի ակունքների շրջանից դեպի արևելք՝ մինչև Թերեք գետը տարածվող երկրամասը (տե՛ս Երեմյան Ս., Նշվ. աշխ., էջ 32):

⁶ Օան. 3. «Ասֆանդիար իբն Քաստասաբ»: Իբն Ռուստեհը նշում է, որ ալանների արքան կոչվում էր «Բաղայիր» (տե՛ս «Kitâb al-a'lâk an-na'fisa auctore Abû-Âli Ahmad-ibn-Omar ibn Rosteh et Kitâb al-Boldân auctore Ahmed ibn Abî Jakûb ibn Wâdhîh al-Kâtîb Al-Jakûbî», -BGA, editio II, p. VII, Lugd. Bat., 1967, էջ 148): Վ. Մինորսկին կարծում է, թե «Քարթանդաջ» կամ «Քերթանդաջ» անվանումը թյուր-

թագավորների համար, այնպես, ինչպես Ֆիլան-շահ տիտղոսը կրում են Սարիրի բոլոր թագավորները: Ալլանի մայրաքաղաքը կոչվում է Մասա¹, որը նշանակում է «բարեպաշտ»: Այդ քաղաքից բացի, արքան [բազմաթիվ] ամրոցներ և ամառանոցներ ունի ու երբեմն որոշ ժամանակով մեկնում է դրանցից մեկը: Նրա և Սարիրի արքայի [ընտանիքների] միջև ամուսնական կապ կա, քանի որ նրանցից յուրաքանչյուրն ամուսնացել է մյուսի քրոջ հետ: Իսլամի ծագելուց հետո, Աբբասյանների ժամանակաշրջանում, Ալլանի թագավորներն ընդունեցին քրիստոնեությունը, իսկ մինչև այդ նրանք հեթանոսներ էին: [Յիջրայի] 320 թ.²-ից հետո նրանք հրաժարվեցին քրիստոնեությունից և քչեցին եպիսկոպոսներին ու քահանաներին, որոնց ուղարկում էր Ռումի արքան: Ալլան թագավորության և ալ-Կաբխ լեռան միջև կա մի ամրոց ու մեծ գետի վրա գցված մի կամուրջ: Այդ ամրոցը կոչվում է Ալլանի ամրոց: Այն կառուցվել է հնում, պարսկական հին արքաներից Ասպանդիար իբն Յաստասֆի³ կողմից: Նա այդ ամրոցում կայազոր հաստատեց, որի պարտականությունն էր ալաններից պաշտպանել ճանապարհը դեպի ալ-Կաբխ լեռ, իսկ նրանք ամրոցի մոտակա կամրջից բացի [անցնելու] այլ ճանապարհ չունեն: Ամրոցը կառուցված է հսկա ժայռի վրա և այն գրավելու կամ այնտեղ մտնելու համար դրա բնակիչների համաձայնությունը ստանալուց բացի այլ հնարավորություն չկա: Ժայռի վրա կառուցված այդ (194) ամրոցում կա խմելու ջրի մի աղբյուր, որը բխում է ժայռի գագաթից և դուրս գալիս ամրոցի մեջտեղում: Այն աշխարհի ամրոցների մեջ հայտնի է իր անառիկությամբ: Իրենց բանաստեղծություններում պարսիկները պատմում են [այդ ամրո-

ցական պատվավոր կոչում է: «Քեր»-ը հաճախ է հանդիպում թյուրքական անուններում, ինչպես, օրինակ՝ Քեր-Բուղա, Քեր-Բալիկ և այլն: Անվան երկրորդ մասը կարելի է համեմատել IX դ. հիշատակվող հյուսիսկովկասյան, հավանաբար, հենց խազարական, ծագմամբ ամիրայի՝ Իսհակ իբն Քունդաջի կամ Իսհակ իբն Քունդաջիկի անվան հետ (տե՛ս Минорский В., նշվ. աշխ., էջ 204, ծան. 73):

¹ Յակուտը տալիս է «Մադս» ձևը և նշում, որ այն նշանակում է «կրոն» (տե՛ս Jacut, I, էջ 351): Ն. Կարաուլովը հավանական է համարում, որ խոսքը ալանական մայրաքաղաքի մասին է, որը նույնական է Վլադիկավկազ քաղաքից արևմուտք գտնվող Կարդարոն գյուղի մոտակա ավերակներից (տե՛ս Караулов Н., նշվ. աշխ., էջ 73, ծան. 101): Նա այդ տեղադրությունը բխեցնում է Իբն Ռուստեհի այն վկայությունից, թե այն գտնվում էր Սարիրի սահմանից երեք և Բաբ ալ-Լանից տասն օրվա ճանապարհի հեռավորության վրա (տե՛ս Ibn Rosteh, էջ 148):

² Իմա՛ մեր թվականության 932թ.:

³ Ծան. 5՝ Քաշտասաբ: Յաստասֆ անվան տակ պետք է հասկանալ պարսկական Վշտնասպ անունը: Աքեմենյան Դարեհ I-ը կոչվում էր Դարեհ I Վշտնասպ (522-486 թ. Ք.ա.): Յաստասֆ որդի Ասպանդիարը, հավանաբար, հենց Դարեհն I-նն է:

ցի] և այն մասին, թե ինչպես Ասպանդիար իբն Յաստասֆը կառուցեց այն: Ասպանդիարը բազում պատերազմներ մղեց արևելքի շատ ժողովուրդների դեմ: Նա արշավեց մինչև հեռավոր թուրքերի երկիր և ավերեց Պղնձե քաղաքը (մադինա ա-սուֆր), որն անմատչելի էր ու նրա գրավման մասին մտածելն անգամ՝ ավելորդ: Պարսիկների մեջ այդ ամրոցն ասացվածք էր դարձել: Ասպանդիարի գործերը և այն, ինչ մենք պատմել ենք նրա մասին, նկարագրված են այն գրքում, որը կոչվում է Քիտաբ ալ-Բանքաշ¹, որն արաբերեն է թարգմանել իբն ալ-Մուկաֆֆան²: Երբ Մասլամա իբն Աբդ ալ-Մալիք իբն Մարվանը եկավ այդ երկիրն ու նվաճեց նրա ժողովուրդը³, նա այդ ամրոցում արաբներ բնակեցրեց, և մինչև այժմ նրանք հսկում են այն: Նրանց հաճախ ցամաքով սնունդ էին բերում Տաֆլիսի⁴ սահմանային շրջանից⁵: Տաֆլիսի ու այդ ամրոցի միջև անհավատների միջով 5 օրվա ճանապարհ է: Եթե նույնիսկ ամրոցում մեկ մարդ լինի, նա կարող է խանգարել անհավատների բոլոր արքաներին անցնելու այդտեղով, քանի որ ամրոցը գտնվում է վերևում և իշխում է ճանապարհի, կամրջի ու գետի վրա: Ալլանի թագավորը կռվի դաշտ է հանում 30 հզ. զինվոր: Նա հզոր է, քաջ և ավելի մեծ հեղինակություն ունի, քան մյուս արքաները: Նրա թագավորության մեջ անթիվ բնակավայրեր կան: Երբ առավոտյան արթողաները կանչում են, նրանց ի պատասխան կանչում են արթողաներն ամբողջ թագավորության մեջ, քանի որ բնակավայրերը միմյանց շատ մոտ են գտնվում:

¹ Ծան. 3՝ «ալ-Սիքս»: Մարկվարտը առաջարկում է կարդալ «Քիտաբ ալ-Պայքար», այսինքն՝ «Գիրք ճակատամարտերի», քանի որ տվյալ անունը ոչինչ չի նշանակում (տե՛ս Мухоморский В., նշվ. աշխ., էջ 205, ծան. 78): Գրչագրական հիմքով (بيكار - بنكش) Մարկվարտի տեսակետը միանգամայն ընդունելի է:

² Ազգությամբ պարսիկ գրող, որն ընդունել էր քրիստոնեությունը: Նա Աբբասյանների պալատական խարդավանքներին խառնվելու պատճառով մահապատժի է ենթարկվել հիջրայի 142 թ. (759): Տարբեր լեզուներից արաբերեն է թարգմանել մի քանի գրքեր (տե՛ս Карацтов Н., նշվ. աշխ., թիվ 31, 1902, էջ 42, ծան. 1):

³ Այդ իրադարձությունը, հավանաբար, տեղի է ունեցել 714/715 թ. (տե՛ս Մովսես Կաղանկատուացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, քննական բնագիրը և ներածությունը Վ. Առաքելյանի, Երևան, 1983, էջ 319-320):

⁴ Իմա՝ Տփղիս:

⁵ Արաբ.՝ սաղր: Յակուտը հաղորդում է, որ բոլոր տարածքները, որոնք հարևան են խալիֆայության թշնամի երկրներին և որտեղից կատարվում են արշավանքներն այդ երկրներ, կոչվում էին սաղր (տե՛ս Jacut, I, էջ 927):

Ալլանի թագավորությունից հետո գալիս է Քաշաք կոչվող ժողովուրդը¹, որը բնակվում է ալ-Կաբխ լեռան և Ռուսի ծովի միջև: Այս ժողովուրդը մաջուսիա կրոնն² է դավանում: Այդ կողմերի բոլոր ժողովուրդների մեջ չես գտնի ավելի գեղեցիկ արտաքինով, ավելի մաքուր դեմքով [ժողովուրդ], [այլ ժողովուրդների մեջ] չկան ավելի գեղեցիկ տղամարդիկ ու կանայք: Մյուս ժողովուրդների մեջ չկա ավելի սլացիկ հասակ, բարակ մեջք, ընդգծված կոնքեր, կլորիկ հետույք և, ընդհանրապես, նրանցից ավելի գեղեցիկ արտաքինով ժողովուրդ գոյություն չունի: Նրանց կանայք հայտնի են իրենց նուրբ վերաբերմունքով: Նրանք հագնում են սպիտակ շորեր, Ռուսի դիպակ (195), վառ կարմիր [հագուստ] կամ դիպակից այլ ոսկեգարդ հագուստներ: Նրանց երկրում կանեփից պատրաստում են կտորներ, որը կոչվում է թալա և շատ ավելի նուրբ է ու դիմացկուն, քան դիպակը, դրանից պատրաստված հագուստի գինը հասնում է 10 դինարի: Այն տանում են իսլամի երկրներ: Այդ կտորից պատրաստում են նաև հարևան ժողովուրդները, բայց ավելի հարգի է Քաշաքում [պատրաստված]: Ալլանը ավելի հզոր է, քան Քաշաքը, որն Ալլանից պաշտպանվել չէր կարողանա, եթե չունենար ծովի ափին կառուցված ամրոցներ: Ծովի վերաբերյալ, որի ափին նրանք ապրում են, մարդկանց կարծիքները տարբերվում են: Որոշները կարծում են, թե դա Ռուսի ծովն է, մյուսները՝ թե դա Նիթասն է: [Որոշակիորեն] հայտնի է, սակայն, որ նրանք կապ ունեն Տրաբզունդայի հետ, որտեղից նրանց երկիր նավերով ապրանք է գալիս, և նրանց երկրից նույնպես այնտեղ նավեր են մեկնում: Ալլանի համեմատությամբ նրանց թուլության պատճառն այն է, որ նրանք միասնական թագավոր չունեն: Հայտնի է, որ եթե նրանց լեզվով խոսող ցեղերը միավորվեն, ո՛չ Ալլանը և ո՛չ մյուս ժողովուրդները, չեն կարող նրանց ճնշել: Նրանց անվանումը պարսկերեն «հպարտություն», «պարծենկոտություն» է նշանակում, քանի որ պարսիկները գոռոզ ու հպարտ մարդկանց անվանում են «քաշաք»:

...(203) Հիմա վերադառնանք ալ-Կաբխ լեռան, պարսպի և ալ-Բար վալ-Աբվաբի նկարագրությանը: Մենք արդեն հիշատակել ենք այնտեղ ապրող որոշ ժողովուրդների մասին:

¹ Իմա՝ չերկեսներ (տե՛ս Минорский В., նշվ. աշխ., էջ 206, ծան. 80, Караулов Н., նշվ. աշխ., թիվ 38, էջ 74, ծան. 106):

² Իմա՝ գրադաշտ: Արաբները «մաջուսիա» էին կոչում հին ռուսներին ու նորմաններին, որոնք այրում էին իրենց մեռելներին (տե՛ս Минорский В., էջ 206, ծան. 81):

Ալլան երկրի կողքին բնակվում են արխագները¹: Նրանք դավանում են քրիստոնեական կրոնը և, չնայած այժմ թագավոր ունեն, Ալլանի արքան իշխում է նրանց: Նրանց երկիրը տարածվում է մինչև ալ-Կաբխ լեռը:

Աբխագների թագավորության² հարևանությամբ գտնվում է Ջուրիացիների թագավորությունը³: Նրանք քրիստոնեական կրոնը դավանող ժողովուրդ են և կոչվում են Խագրան⁴: Ներկայումս նրանք մի թագավոր ունեն, որը կոչվում է Թաբիայի⁵, իսկ այդ Թաբիայի թագավորի մայրաքաղաքը հայտնի է որպես Մասջիդ Չի ալ-Կարնայն⁶: Աբխագներն ու Խագարները⁷ տուրք⁸ էին վճարում Տաֆլիսի սահմանային շրջանի իշխանին՝ Խանին՝ Տաֆլիսի գրավումից և այնտեղ մուսուլմանների հաստատումից սկսած մինչև Մուսավաքիլի օրերը⁹: Այնտեղ մի տղամարդ կար Իսիակ

¹ Աբխագների երկիրը՝ Աբխագքը, տարածվում էր Բզիբ և Կողոր գետերի միջև (տե՛ս Երեմյան Ս., նշվ. աշխ., էջ 42): Աբխագաց թագավորությունը Մասուղու ժամանակներում արևելքում տարածվում էր մինչև Լիխ լեռնաշղթան, իսկ հարավում՝ ընդգրկում Ռիոն գետի ավազանը (տե՛ս Երեմյան Ս., Հայաստանը IX-XI դարերում, Երևան, 1987, քարտեզ):

² Իմա՝ Աբխագաց թագավորություն:

³ Իմա՝ Գուրիա: Պատմական մարզ Վիրքի արևմուտքում: Չբաղեցնում էր ներկայիս Օզուրգեթ, Չոխատաուր և Լանջխութ շրջանների տարածքները (տե՛ս ГУРИЯ,- Большая энциклопедия Кирилла и Мефодия, 2004):

⁴ Ըստ երևույթին, պետք է լինի Ջուրզան, ինչպես Վիրքը կոչում են մյուս արաբ հեղինակները (տե՛ս al-Kurdj, Gurdj, Gurdjistan, С.Е. Bosworth, EOI, CD-ROM, V:486b): Նույնական էր Չաբարիա Հռետորի հիշատակած Գուրզանին (տե՛ս Пигулевская Н., Сирийские источники по истории народов СССР, Москва, 1941, էջ 81):

⁵ Վ. Մինորսկին կարծում է, որ այստեղ խոսքը ճորոխի ավազանի Բագրատունիների մասին է: Նա հենվում է Մարկվարտի այն ենթադրության վրա, թե «աթթաբիայի»-ն պետք է կարդալ «ալ-մանբաղ»-ի, որը կհամապատասխանի վրացերեն «ման-պաալի» կոչումին, որը նշանակում է «թագավոր հայր» (տե՛ս Минорский В., էջ 209, ծան. 95): Դա է ցույց տալիս Յակուտի այն հաղորդումը, որտեղ «թաբիայի»-ի փոխարեն նշված է «թանբաղի» (տե՛ս Jacut, II, էջ 58):

⁶ Կնշանակի «Ալեքսանդրի մզկիթ»: Մակեդոնական արքան, ըստ Վ. Մինորսկու, հիշատակած է միայն այն պատճառով, որպեսզի շեշտովի քաղաքի հին լինելը: «Մասջիդ»-ը պետք է հասկանալ ոչ թե «մզկիթ», այլ «Մժխեթա» իմաստով, իսկ վերջինս հին քաղաք էր Տփղիսից հյուսիս (տե՛ս Минорский В., էջ 210, ծան. 96): Ալեքսանդր Մակեդոնացուն «զուլ կարնայն», այսինքն՝ երկու կոտոշների տիրակալ էին կոչում այն պատճառով, որ նա ծայրից ծայր տիրել էր այն ժամանակ հայտնի աշխարհին (տե՛ս Карацлов Н., նշվ. աշխ., թիվ 38, էջ 74, ծան. 109):

⁷ «Խագրանը», աղավաղվելով, աստճանաբար վերածվել է «Խագարներ»-ի:

⁸ Արաբ.՝ ջիզիա:

⁹ Մուսավաքիլն իշխել է 846-861 թթ.:

իբն Իսմայիլ անունով¹, որն իր հետ եղած մուսուլմանների միջոցով իրեն էր ենթարկել շրջապատի ժողովուրդներին: Եվ նրանք ենթարկվում էին նրան ու տուրք վճարում: Այնտեղի բոլոր ժողովուրդները ենթարկվում էին նրան մինչև [այն ժամանակ], երբ Մուտավաքիլն ուղարկեց [Բուդային]², որը եկավ Տաֆլիսի սահմանային շրջանը: Նա պաշարեց Տաֆլիսը, մինչև որ [կարողացավ] գրավել զենքով և մահապատժի ենթարկեց Իսհակ իբն Իսմայիլին, որը տիրում էր ամբողջ շրջակայքը: Շատ երկար կլիներ այս իրադարձությունների մասին պատմելը, բացի այդ, այդ [պատմությունը] հայտնի է այնտեղի ժողովրդին ու պատմության գիտականներին: Ես կարծում եմ, որ նա (Իսհակ իբն Իսմայիլը) Օմայանների տոհմին³ պատկանող կանոդ Կուրայշ⁴ էր կամ միացել էր այդ [ցեղին]:

Այդ ժամանակից մինչև օրս Տաֆլիսի սահմանային շրջանում մուսուլմաններից այլևս չեն վախենում, և շրջակա թագավորություններն այլևս նրանց չեն ենթարկվում: Եվ բաժանվեցին (204) Տաֆլիսից շատ գյուղեր, ու փակվեցին իսլամի երկրներից Տաֆլիսի սահմանային շրջան մտնող ճանապարհները⁵, [քանի որ] դրանք անցնում էին անհավատների հողերով, իսկ սահմանային շրջանը շրջապատված է դրանցով: Սակայն, նրա բնակիչները ուժեղ և քաջ են, չնայած շրջապատված են հիշյալ ցեղերով:

Խազրանների թագավորության⁶ կողքին գտնվում է Սամսախի կոչվող կոչվող թագավորությունը⁷: Բնակչությունը խառն է՝ քրիստոնյա և հեթանոս: Նրանք թագավոր չունեն:

¹ Իսհակ իբն Իսմայիլը Տփղիսի ամիրան էր IX դ. կեսերին: Թովմա Արծրունին նրա կոչում է «քաղաքապետն Սահակ» (տե՛ս Թովմա Արծրունի և Անանուն, էջ 272):

² Աբբասյաններին (750-1258) ծառայող թուրք զորավար, որը խալիֆա Մուտավաքիլի հրամանով ներխուժեց Հայաստան ու Վիրք՝ ճնշելու ծագած ապստամբությունը (տե՛ս Թովմա Արծրունի և Անանուն, էջ 200-298):

³ Մուավիայի կողմից 661 թ. հիմնադրված խալիֆայական հարստություն, որը կործանվեց Մարվան Բ խալիֆայի օրոք (744-750)՝ 750 թ. (տե՛ս Umayyads, G.R. Hawting, EOI, CD-ROM, X:840a):

⁴ Արաբական ցեղ է, որին պատկանում էին Մուհամմադն ու Ալին (տե՛ս Kuraysh, W. Montgomery Watt, EOI, CD-ROM, V:434a):

⁵ Արաբական տիրապետության շրջանում Տփղիսը ճանապարհներով կապված էր Պարտավի և Դվինի հետ (տե՛ս al-Istakhri, էջ 193, al-Moqaddasi, Kitáb ahsán at-tákasim fi ma'rifat al-akálim.-BGA, editio III, p. III, Lugd. Bat., 1967, էջ 382):

⁶ Իմա՝ Ջուրգանի թագավորություն:

⁷ Իմա՝ Սամցխե, որը զբաղեցնում էր այժմյան Ախալցխայի շրջանը (տե՛ս Երեմյան Ա., նշվ. աշխ., էջ 79):

Նրանց հարևանությամբ, Տաֆլիսի սահմանային շրջանի և արդեն հիշատակված Ալլան ամրոցի միջև գտնվում է աս-Սանարիացիների թագավորությունը¹: Նրանց թագավորը կոչվում է Քարասքուն², որը նրանց թագավորների ընդհանուր անունն է: Նրանք քրիստոնյա են, բայց բոլոր քրիստոնյաները համարում են, որ նրանք սերում են արաբներից՝ Նիզար իբն Մաադ իբն Մուդարից³ և Ուկայլ տոհմի⁴ (իմա՝ ցեղ-Ա.Ե.) ճյուղից, որն այստեղ հաստատվել է հին ժամանակներում և [ներկայումս] հարգանք է վայելում շատ ժողովուրդների շրջանում:

...Աս-Սանարիաների թագավորությունից հետո Շաքինների թագավորությունն է⁵: Բնակիչները քրիստոնյաներ են, որոնց մեջ կան նաև առևտրով և արհեստներով զբաղվող մուսուլմաններ: Այժմ, երբ գրվում է մեր գիրքը, այնտեղ թագավորում է Ադար իբն Նաբիի իբն Մահաջարը⁶:

¹ Իմա՝ Ծանարք: Ծանարների երկիրը մեծ կարևորություն ուներ խալիֆայության համար՝ Ալլանաց դռանը սահմանակից լինելու պատճառով (տե՛ս «Աշխարհացոյց Մովսեսի խորենացոյ», էջ 26):

² Հունարեն «քորեպիսկոպոս» բառի աղավաղումն է: Այդպես էր Ծանարքի իշխողների տիտղոսը (տե՛ս «Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցոյ Պատմութիւն Հայոց», աշխարհաբար թարգմանությունը և ծանոթագրությունները Գ. Թոսունյանի, Երևան, 1996, էջ 304):

³ Արաբական ցեղերը բաժանվում էին մեծ խմբի՝ հյուսիսային և հարավային: Առաջինն իր ցեղապետ Նիզար իբն Մաադդի անունով կոչվում էր Նիզար, իսկ երկրորդը՝ Եմենի ցեղախումբը: Նիզար ցեղախումբը բաժանվում էր երկու մեծ խմբի՝ Մուդար և Ռաբիա: Մուդար ցեղախմբի մեջ էին մտնում Կայս-այլան և Կուրայշ ցեղերը: Կայս-այլանի մաս էր կազմում Սուլայն ցեղը, որի մի հատվածը կայսիկներն էին: Իսկ արաբական հարավային ցեղերը գաղութացրել էին Ասորիքը, հաստատվել նաև Ատրպատականում, որտեղից էլ մուտք էին գործել Արմինիա (տե՛ս Фильштинский И., История арабов и халифата (750-1517), Москва, 2006, էջ 7, Տեր-Ղևոնդյան Ա., Արաբական ամիրայությունները Բագրատունյաց Հայաստանում, Երևան, 1965, էջ 63):

⁴ Արաբական հյուսիսային ցեղերից (տե՛ս Khafagja, F. Krenkow, A.A.A. Dixon, EOI, CD-ROM, IV:918b):

⁵ Իմա՝ Շաքեի կամ այսպես կոչված Աղվանից թագավորությունը, որն ընդգրկում էր Շաքե և Կամբեճան գավառների տարածքները: Շաքե քաղաքը համապատասխանում է ներկայիս Շաքի կամ Նուխի քաղաքին, իսկ Շաքե գավառը՝ Շաքիի կամ Նուխիի շրջանին (տե՛ս Երեմյան Ս., էջ 73: Տե՛ս նաև Минорский В., նշվ. աշխ., էջ 116): Կամբեճան գավառը նույնական է ներկայիս Շիրակի դաշտավայրին, որը տարածվում է Կուր գետի ձախ ափին (տե՛ս Երեմյան Ս., նշվ. աշխ., էջ 34):

⁶ Ծան. 6. «Ադարնարսահ իբն Համամ», այսինքն՝ «Ատրնեսես, որդի Համամի»: Այսպես կոչված Աղվանից առաջին թագավոր Համամից (IX դ. վերջ-X դ. սկիզբ) հետո Շաքեում իշխում էր նրա որդին Ատրնեսեսիը (տե՛ս Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 220, Թովմա Արծրունի և Անանուն, էջ 296-298: Տե՛ս նաև Ուլուբաբյան Բ., Խաչենի իշխանությունը X-XVI դարերում, Երևան, 1975, էջ 82):

(205) Նրանցից հետո Կիլա թագավորությունն է¹: Մայրաքաղաքի բնակիչները մուսուլմաններ են, իսկ բնակավայրերում ու գյուղերում՝ [ապրում են] քրիստոնյաներ: Այժմ, մեր գրքի գրվելու ժամանակ, նրանց թագավորն Անբասա Միակնանին է²: Նա ավագակների, թափառաշրջիկների և անբարոյականների հովանավորն է:

Այս թագավորությանից հետո Մուկան թագավորությունն է: Դրա մասին արդեն խոսել ենք, այն նվաճված թագավորություն է ու կցված է Շարվան-շահի թագավորությանը: Բայց սա այն հայտնի [Մուկանիա] երկիրը չէ, որը գտնվում է Խազարական ծովի ափին³:

Մուհամմադ իբն Յազիդը, որն այժմ հայտնի է Շարվան-շահ անունով, տիրում է նաև ալ-Իրան-շահը, որն իր նախնիներից և հորից է ժառանգել: Այն ժամանակ Շարվան-շահի արքան Ալի իբն ալ-Յայասանն էր: Նրա մահից հետո Մուհամմադը, ինչպես հիշատակել ենք, սպանելով իր հորեղբայրներին, տիրեց Շարվան-շահին ու գրավեց հիշյալ թագավորությունները: Նա ալ-Կաբխ լեռան վրա մի ամրոց ունի, որն աշխարհի հայտնի ամրոցների մեջ լավագույնն է:

Շատ պատմություններ կան ալ-Բաբի և դրա զարմանալի շինությունների մասին, այսինքն՝ քարե քաղաքի, որը Կուբադ իբն Ֆիրուզը⁴՝ Խոս-

¹ Ծան. 1. Կաբալա: Անկասկած, ճիշտը Կաբալա ձևն է, քանի որ այն գտնվում էր Շաքեից ոչ հեռու: Համապատասխանում է Աղվանից թագավորության Կապաղակ մայրաքաղաքին և նույնական է ներկայիս Կաբալա գյուղին (Զուխուր Կաբալա), որը գտնվում է Նիջ գյուղի մոտակայքում (տե՛ս Երեմյան Ս., նշվ. աշխ., էջ 58): Կապաղակի թագավորությունը, ամենայն հավանականությամբ, ընդգրկելու էր Կապաղակ քաղաքի շրջակա տարածքը:

² Վ. Մինորսկին կարծում է, որ նա հայկական ծագում ուներ (տե՛ս Минорский В., էջ 116): Նրա որդու անունը Աբդ ալ-Բարր էր: Բալագուրին, սկսելով Հայաստանի նվաճման պատմությունը, հաղորդում է, որ իրեն տեղեկություններ տվողներից մեկը Պարտավ քաղաքի բնակիչ Մուհամմադ իբն Իսմայիլն էր, որը լսել էր այդ տեղեկություններն Աբու Բարա Անբասա իբն Բահր ալ-Արմանիից (տե՛ս بلاذري, I, էջ 231): Վերջինը կամ նույնական էր Անբասա Միակնանու որդուն, կամ էլ նրա ազգականն էր: Իսկ ալ-Արմանի անունը ցույց է տալիս նրա հայկական ծագումը:

³ Ն. Կարաուլովը կարծում է, թե Մուկանը երկիր էր Կուր և Ալագան գետերի ջրկիցի մոտակայքում, որը վրացիներն անվանում էին Մովական (տե՛ս Карапов Н., նշվ. աշխ., թիվ 38, էջ 75, ծան. 118): Կարծում ենք, սակայն, որ Մուկան, Մուկանիա և Մովական անվանումները վերաբերում էին միևնույն երկրին, որը նույնական է ներկայիս Մուղանի դաշտին: Այսինքն՝ Մասուդին սխալմամբ է տարբերակում Մուկան և Մուկանիա անվանումները:

⁴ Իմա՛ Սասանյան Պերոզ արքայի որդի Կավատ (488-531):

որով Անուշարվանի հայրը, կառուցել է Մասկաթ կոչված երկրում¹, պարիսպների մասին, որը նույն թագավորը կառուցել է Շարվանում և, որը կոչվում է Յողե պատ², քարե պատի մասին, որը հայտնի է Բարմաքի անունով³, ինչպես նաև այն շրջանի մասին, որը սահմանակցում է Բարդաա երկրին: Մենք մանրամասն չենք պատմում, քան որ այդ մասին արդեն խոսել ենք մեր մյուս գրքերում:

Քուր գետը⁴ սկիզբ է առնում Խազրան երկրից⁵ Ջուրջինի թագավորությունից⁶, հոսում Աբխազ երկրով, հասնում Տաֆլիսի սահմանային շրջանը և բաժանում այն երկու մասի: Յետո հոսում է աս-Սիավուրդիացիների երկրով⁷, հասնում Բարդաայից 3 մղոն հեռավորության վրա գտնվող

¹ Իմա՝ Մագքուք: Ըստ հայկական և արաբական աղբյուրների՝ տարածվում էր Կասպից ծովի ափին՝ Դարբանդի և Շիրվանի միջև (տե՛ս «Աշխարհացոյց Մովսեսի Խորենացույ», էջ 27, Jacut, I, էջ 438 և այլն): Արևմուտքում՝ Կուբա քաղաքի շրջակայքում, սահմանակցում էր Աբխազ թագավորությանը (տե՛ս Եղիազարյան Ա., Արաբական աղբյուրների Աբխազ թագավորությունը, «Լրաբեր (հաս. գիտ.)», 2005, թիվ 2, էջ 223): Համարյա ամբողջովին համապատասխանում է հետազայի Մուշկուր երկրին, որը տարածվում էր Դարբանդի ու Շապորան քաղաքի և Դուբայի ու Կասպից ծովի միջև (տե՛ս «История, география и этнография Дагестана 18-19 вв.», էջ 87-90, Երեմյան Ս., նշվ. աշխ., էջ 64)

² Այդ պատը կամ պարիսպը կառուցվել էր Այսրկովկասը խազարական արշավանքներից պաշտպանելու նպատակով: Ըստ Ն. Կարաուլովի, դրա մնացորդները, ինչպես նաև մի քանի ամրոցներ, պահպանվել են Գիլգիլ-չայ գետի մոտակայքում, Դիվիչի բնակավայրի հարևանությամբ: Պարսպի երկարությունը մոտ 10 կմ է (տե՛ս Karaytov H., նշվ. աշխ., թիվ 38, էջ 76, ծան. 127): Ավելի հավանական ենք համարում այն, որ Կավատ արքայի կառուցած այդ պարիսպը նույնացվի ոչ թե Գիլգիլ-չայ գետի մոտակայքում գտնվող պարսպին, այլ Ապզուտկավատ պարսպին, որի անվանումն իսկ խոսում է մեր ենթադրության օգտին: Ապզուտկավատն ուսումնասիրողները տեղադրում են Շապորան գետի (այժմ Շաբրան-չայ) և Վելվելիչայի միջև: Այդ պարիսպը սկսվում էր Կովկասյան լեռներից և, անցնելով Շապորան քաղաքի (համանուն գետի վրա) հյուսիսակողմով, ձգվում մինչև Կասպից ծովը (տե՛ս Երեմյան Ս., նշվ. աշխ., էջ 37: Տե՛ս նաև Հարությունյան Բ., Հայաստանն ըստ «Աշխարհացոյց»-ի և այլ աղբյուրների, քարտեզ, Երևան, 2001):

³ Բարմաքին երկիր էր նախկին Դուբայի խանության հարավում (տե՛ս Минорский В., նշվ. աշխ., էջ 213, ծան. 111): Հավանաբար, Բարմաքի պարիսպը նույնական էր Դիվիչի քաղաքի մոտ գտնվող վերոհիշյալ պարսպին:

⁴ Խոսքը Կուր գետի մասին է:

⁵ Իմա՝ Ջուրզան (Վիրք):

⁶ Իմա՝ Գուրգեն: Սա, հավանաբար, Կղարջքի Բագրատունիներից էր: Մարկվարտը սրան նույնացնում է Կղարջքի Գուրգեն Մագիստրոս իշխանի հետ (918-946), որը կրում էր «մեծ» մականունը (տե՛ս Минорский В., նշվ. աշխ., էջ 214, ծան. 114):

⁷ Իմա՝ Սևորդիք: Վ. Մինորսկու թարգմանության մեջ նշված է. «Այնուհետև այն (իմա՝ իմա՝ Կուր գետը) հոսում է Սիավուրդիայի հողերով, որոնք հայերի ճյուղն են

գտնվող մի վայր և հոսում դեպի Բարդաջ¹, որը Բարդաայի շրջաններից մեկն է: (206) Ապա հասնում է աս-Սանարա² և միախառնվում ար-Րաս գետին³: [Վերջինը] սկիզբ է առնում Ռումի երկրի Տրաբզունդահ քաղաքի⁴ մոտ, իսկ հետո՝ [հոսում] մինչև Քուրի հետ միախառնվելը:

հանդիսանում» (էջ 214): Մասուդու երկասիրության 1948 թ. հրատարակության մեջ այդ հիշատակության վերջին հատվածը բացակայում է, ըստ երևույթին, ինչ-ինչ սխալի հետևանքով:

Ն. Կարաուլովն աս-Սիավուրդիան տեղորոշում է ներկայիս Շուլավերի շրջանում՝ Խրամ գետի աջ ափին (տե՛ս Караулов Н., նշվ. աշխ., թիվ 38, էջ 77, ծան. 129): Վ. Մինորսկին, աս-Սիավուրդիա երկրի ստուգաբանության համար հենվում է Կոստանդին Ծիրանածնի այն հաղորդման վրա, որ հունգարների հին անունը «սաբարտ ասֆալ» էր, այսինքն՝ «սպիտակ սաբարտ»: Պեչենեգների ճնշման տակ, հունգարների մի մասը հեռացավ արևմուտք, իսկ մյուս մասը՝ հաստատվեց Պարսկաստանի մի մասում, հավանաբար, VIII դ. կեսին: Նա այն տեսակետն է արտահայտում, որ վերջիններին հայերն անվանել են Սևորդիք (սև որդիներ), իսկ արաբներն աս-Սիավուրդիա (տե՛ս Минорский В., նշվ. աշխ., էջ 214, ծան. 115):

Հայտնի է, որ «[ը] զՏաուշ գաւառն Սեւորդեաց» (տե՛ս «Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի», Վենետիկ, 1862, էջ 98): Տուս կամ Տավուշ գավառը տեղադրվում է Տավուշ գետի ստորին հոսանքի ավազանում (տե՛ս Երեմյան Ս., նշվ. աշխ., էջ 86): Սևորդիների մասին Հովհաննես Դրասխանակերտցին հաղորդում է. Բուղա զորավարը «չուեալ յմտի գաւառ՝ ձերբակալ ՚ի Տուս գիւղ առնէ զՍտեփաննոս, որում և Կոն անուանէին զնա. որ ՚ի նախնւոյ իւրմէ Սևկոյ՝ Սևորդիք ազգքն անուանէին» (Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 130): Այս հաղորդումը ցույց է տալիս, որ Վ. Մինորսկու տեսակետը քննություն բռնել չի կարող և պարզապես սխալ է: Այդ հայկական տոհմը Սևորդի էր կոչվում իր նախահայր Սևուկի անունից: Բալագուրին հաղորդում է, որ Սևորդիները հարձակվել ու ավերել էին Շամքոր քաղաքը (տե՛ս بلاذري, I, էջ 240):

¹ Բարդաջը կամ Բարդիջը, ըստ Յակուտի, գտնվում էր Արմինիայում՝ վերջինի և Ատրպատականի ոստիկանության սահմանին, որտեղից մինչև Պարտավ 14 փարսախ էր (81կմ) (տե՛ս Jacut, I, էջ 556): Իբն Ռուստեհը, խոսելով Երասխ գետի մասին, վկայում է, թե այն «հոսում է Վարսանի մոտով դեպի Բարդիջ քաղաքը, իսկ նրանից այն կողմ միախառնվում է Կուրի հետ» (Ibn Rosteh, էջ 89): Այսինքն՝ Բարդաջը գտնվում էր Կուր և Երասխ գետերի միջագետքում՝ երկու գետերի ջրկիցի մոտակայքում (տե՛ս Եղիազարյան Ա., Արմինիա ոստիկանությունը..., էջ 103-106):

² Թերևս, ճիշտ է Ն. Կարաուլովի կողմից աս-Սանարայի նույնացումը ներկայիս Սենգեր բնակավայրին՝ Կուր և Երասխ գետերի միջև, դրանց ջրկիցի մոտակայքում (տե՛ս Караулов Н., նշվ. աշխ., թիվ 38, էջ 77, ծան. 131):

³ Իմա՝ Երասխ գետ:

⁴ Կամ Տրաբզունդա: Վ. Մինորսկին կարծում է, որ Տրապիզոնի փոխարեն պետք է լինի Էրզրում, քանի որ այդ քաղաքի մոտակայքում են Երասխի ակունքները (տե՛ս Минорский В., նշվ. աշխ., էջ 215, ծան. 119): Սակայն, ամենայն հավանականությամբ, Մասուդին Երասխի ակունքների տեղը նշում է պայմանականորեն, քանի որ ուղղակի տեղեկություններ չունի, թե հատկապես ո՞րտեղ են դրանք գտնվում:

Ար-Րաս գետը, միանալով [Քուրիհն], թափվում է հազարական ծովը: Ար-Րասը հոսում է ալ-Քադդայն երկրի¹, որն Ադարբայջանում [գտնվող] խուրամյան Բաբաքի² հայրենիքն է, և Աբի Մուսա լեռան³ միջև, որն Առան երկրի⁴ մասերից է: Եվ [ապա] հոսում է Վարսան երկրով⁵ ու հասնում մեր նկարագրած տեղը⁶: Այդ գետերի հոսանքները մենք արդեն նկարագրել ենք:

Սաբիդ-ռուջ գետի⁷ անունը նշանակում է «սպիտակ գետ», եթե պարսպարսկերեն և արաբերեն լեզուների միջև [ինչյունների] փոխատեղումներ կատարենք: Այն հոսում է Դայլան երկրով դեպի Սալար ամրոցը: Այն այդպես է կոչվել Ասվար Դայլամցու որդու անունից, որը Դայլամի արքաներից է: Նա հայտնվեց այս գրքի գրվելու ժամանակ և տիրեց Ադարբայջանը: Այս գետը, այնուհետև, Դայլամից հոսում է Ջիլ: Դայլամ երկրում մի ուրիշ գետ թափվում է նրա մեջ: Նրա անունը Շահան-ռուդ է⁸:

¹ Ալ-Քադդայն կամ Բադդ երկիրը գտնվում էր Ատրպատականի կազմում և Արմինիայից բաժանվում էր Երասխ գետով, իսկ նրա բերդերից մեկը, որի անունը չի պահպանվել, Երասխի ափին էր (տե՛ս Jacut, I, էջ 529-530, տե՛ս Եղիազարյան Ա., Արմինիա ոստիկանությունը..., էջ 117-118):

² Իմա՝ խուրամյան շարժման առաջնորդ Բաբեկ: Երկար տարիների ընթացքում ահ ու սարսափի մեջ էր պահում հալիֆայությանը և ջախջախում նրա բանակները: 837 թ. իր Բադդ քաղաքի անկումից հետո փախուստի դիմեց դեպի Արցախ, որտեղ Սահլ Սմբատյան Առանշահիկ իշխանի կողմից գերվեց և ուղարկվեց Սամառա: Այնտեղ 838 թ. նա տանջամահ արվեց (տե՛ս Babak, D. Sourdel, EOI, CD-ROM, I:844a):

³ Աբի Մուսա լեռ ասելով՝ Մասուդին նկատի ունի Քթիշ լեռը, որի գագաթին գտնվող համանուն ամրոցում Եսայի Աբու Մուսե Առանշահիկ իշխանը հերոսական կռիվներ մղեց Բուղայի զորամասերի դեմ (Թովմա Արծրունի և Անանուն, էջ 278, 290, տե՛ս Եղիազարյան Ա., Արմինիա ոստիկանությունը..., էջ 117):

⁴ Այս տեղանունը վերաբերում էր Սասանյանների տիրապետության շրջանում Աղվանից մարզպանության մեջ մտցված Մեծ Հայքի երկու աշխարհներին՝ Արցախին և Ուտիքին (տե՛ս Jacut, I, էջ 183-184, Ibn Khordadbeh, էջ 121, տե՛ս Եղիազարյան Ա., Արմինիա ոստիկանությունը..., էջ 36-37):

⁵ Վարսան քաղաքը համապատասխանում է Մեծ Հայքի Փայտակարան աշխարհի Վարդանակերտ գավառի համանուն կենտրոնին: Այն նույնական է Երասխ գետի ափին՝ նրա մեջ Կարասու գետի թափվելու տեղից դեպի հյուսիս-արևելք գտնվող Ալտան բերդի ավերակներն (տե՛ս Երեմյան Ս., Աղվ.աշխ., էջ 83): Վարսան երկիր ասելով՝ Մասուդին նկատի ունի Վարդանակերտի շրջակա տարածքը:

⁶ Իմա՝ աս-Սանարա:

⁷ Իմա՝ Սաֆիդ ռուդ: Այս գետը հոսում է հյուսիսարևմտյան Իրանում՝ պատմական Դայլամ երկրում և թափվում Կասպից ծովը (տե՛ս Safid rud, G. E. Boswort, EOI, CD-ROM, VIII:807b):

⁸ Գետ Իրանի հյուսիսարևմտյան մասում՝ Էլբուրզ լեռնային շրջանում: Այն, Թեհրանից արևմուտք գտնվող ակունքներից սկսած, հոսում է հարավ-արևելքից դեպի

Երկու գետերը, միանալով, թափվում են Ջիլի ծովը¹: Վերջինը կոչվում է դայլամցիների, խազարների և վերոհիշյալ մյուս ժողովուրդների անուններով, որոնք ապրում են նրա ափերին: Այս գետերի [ավազանում] հաստատվել էին շատ դայլամցիներ և քիլցիներ, որոնք շարժվեցին այնտեղ ու ասպատակեցին [շրջակա] երկրներից շատերը»:

հյուսիս-արևմուտք, ապա միախառնվում Սաֆիդ ռուդին (տե՛ս Shah rud, G. E. Boswort, EOI, CD-ROM, IX:196b):

¹ Իմա՛ Կասսպից ծով:

**ՑՈՒՑՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԳԻՐՔ
(ՔԻԹԱՔ ԱՏ-ՏԱՆԲԻՅ ՎԱԼ-ԻՇՐԱՅ)**

«ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ ԽԱՉԱՐԱԿԱՆ ԿԱՄ ԵՐՐՈՐԴ ԾՈՎԻ ՄԱՍԻՆ

(60) Խազարական ծովը խազարների, ալ-Բաբ վալ-Աբվաբի, Արմինիայի¹, Ադարբայջանի, Սուկանի, Ջիլի, Դայլամի և Ջուրջանի նավահանգիստ Աբասքունի ծովն է: Այն [նաև] Թաբարստանի, Ջուրջանի, Խավարազմի և դրա (իմա՝ Խազարական ծովի-Ա.Ե.) շուրջը գտնվող այլ երկրների և [ժողովուրդների] ծովն է:

Երա երկարությունը 800 մղոն է, իսկ լայնությունը՝ 600 մղոն և, այլոց կարծիքով, նույնիսկ, ավելի: Տեսքով այն նման է աղիքի:

Ոմանք այն անվանում են Խորասանի ծով, այն պատճառով, որ նրա ափին է գտնվում Խորասանի մեջ մտնող Խավարազմը...:

Այդ ծովի ափին է գտնվում Բաքուի վայրը: Շարվան թագավորության մեջ, ալ-Բաբ վալ-Աբվաբի հարևանությամբ, նավթաբեր աղբյուրներ կան: Այնտեղ սպիտակ նավթ են հանում: Այնտեղ կան նաև հրաբուխներ, այսինքն՝ կրակի շատրվաններ, որոնք բխում են գետնի տակից: Նավթի հանքերի դիմաց կան կղզիներ, որտեղ [նույնպես] կրակի հզոր շատրվաններ կան, որոնք գիշերը երևում են մեծ հեռավորությունից:

...(62) Քուր գետը հոսում է Տաֆլիս երկրով, Ջուրզան երկրում գտնվող Սուղդաբիլ քաղաքով², իսկ, այնուհետև, Բարդաա երկրով և միախառնվում Վարսանի կողքով հոսող ար-Րաա գետի հետ:

¹ Արաբները, նվաճելով Հայաստանն ու Այսրկովկասյան երկրները, կազմավորեցին Արմինիա ոստիկանությունը՝ Դվին կենտրոնով: Արաբները հենց սկզբից էլ ճիշտ գնահատեցին տարածաշրջանում Հայաստանի ու հայ ժողովրդի քաղաքական կշիռն ու ազդեցությունը: Ուստի և պատահական չէ, որ նրանք Հայաստանն ու Այսրկովկասյան երկրներն ընդգրկող վարչական շրջանն անվանեցին Արմինիա (Հայաստան) (տե՛ս Jacut, I, էջ 219-220):

² Իբն Խորդադեբեհը հաղորդում է, որ Խոսրով Անուշիրվանը «Ջուրզան երկրում կառուցեց Սուղդաբիլ քաղաքը» (տե՛ս Ibn Khordadbeh, էջ 123): Մասուդին, խոսելով Կուր գետի մասին, հաղորդում է, որ այն հոսում է «Թիֆլիս երկրով և Սուղդաբիլ քաղաքով, որը Ջուրզան երկրում է» (տե՛ս Masudi, էջ 62): Ս. Ղազարյանը փորձում է Սուղդաբիլ անվան տակ տեսնել Ցուրտավը (տե՛ս Ghazarian M., Armenien unter der arabischen herrschaft bis zur Entstehung des Bagratidenreiches, Marburg, 1903, էջ 86): Սակայն, Սուղդաբիլ քաղաքի տեղորոշման համար պետք է հիմք ընդունել Թաբարի պատմիչի այն հաղորդումը, թե Տփղիսն ու Սուղդաբիլը գտնվում էին միմյանց հարևանությամբ և իրարից բաժանվում էին Կուր գետով (տե՛ս 47 ص، بيروت، ٤، تاريخ الطبري): Հավանական է Սուղդաբիլի

Աղարբայջանուն և Ղայլանուն են գտնվում Սաբիդ-ռուդ գետը, որը հոսում է Սիսար երկրից¹, և Շահ-ռուդ գետը:

Խազարական գետը հոսում է Խազարական թագավորության ներկայիս Աթիլ մայրաքաղաքով: Մինչ այդ նրա մայրաքաղաքը Բալանջարն էր²: Այդ գետի մեջ է թափվում Բուրթաս գետը: Բուրթասը մեծ թուրքական ցեղ է, որը բնակվում է Խազարական թագավորության և Խավարազնի միջև, բայց նրանք խազարական ծագում ունեն: Այս գետով հոսում են Խավարազնի և այլ երկրների ապրանքներով [բեռնված] մեծ առևտրական նավեր: (63)...Բուրթասից սև աղվեսի և այլ թանկարժեք մորթիներ են արտահանվում...ալ-Բաբ վալ-Աբվաբ, Բարդա և...այլ երկրների:

(64) Մի մեծ գետ կա Քիզիլ-ռուդ անունով³, որ կնշանակի «գալի գետ»: Նրա մեջ են թափվում ալ-Կաբխ լեռանից հոսող գետերը և թափվում [Խազարական] ծովն ալ-Բաբ վալ-Աբվաբից ոչ հեռու: Մի մեծ ու հրաշալի կամուրջ է զգված այդ գետի վրա նրա գետաբերանի մոտ, որը նման է Սանջի կամրջին⁴: Սանջի կամուրջն աշխարհի հրաշալիքներից

նույնացումը Մետեխի բերդին (տե՛ս Лордкипанидзе М., նշվ. աշխ., էջ 234, 343): Սուղդարիլ անվանումը առաջացել է «սոգդարելի» բառից, որը վրացերենում նշանակում է «սգավայր» (անդ, էջ 234-235: Տե՛ս նաև Минорский В., նշվ. աշխ., էջ 46, ծանոթ. 8): Միջնադարում այդ անունով մի գերեզմանատուն կար Մետեխի ամրոցի մոտ (տե՛ս Лордкипанидзе М., Возникновение новых феодальных государств, «Очерки истории Грузии», т. II, Тбилиси, 1988, էջ 234):

¹ Քաղաք պարսկական Քրդստանում՝ Համադանի, Ատրպատականի և Դինավարի սահմանակցությամբ (տե՛ս Sisar, V. Minorsky, EOI, CD-ROM, IX:680a):

² Բալանջարը, հավանաբար, նույնական էր հայկական աղբյուրների Վառաչանին (տե՛ս Еремян С., նշվ. աշխ., էջ 143), որը տեղադրվում է ներկայիս Ղաֆիր Ղումուխ վայրում՝ Բույնակսկ քաղաքի մերձակայքում (տե՛ս Երեմյան Ս., նշվ. աշխ., էջ 82): Փորձ է կատարվել Բալանջարը տեղադրելու Բելիջինյան միջնադարյան Թոփրաղ-կալա բնակավայրի տեղում՝ Դարբանդից 25 կմ դեպի հարավ (տե՛ս Котович В., О местоположении раннесредневековых городов Варачана, Баланджара и Таргу, «Сборник «Древности Дагестана», Махачкала, 1974, էջ 199), ինչը սխալ է, քանի որ Բալանջարը գտնվում էր Դարբանդից ոչ թե հարավ, այլ հյուսիս (տե՛ս al-Kufi, II, էջ 115, VIII, էջ 32-35, بلادري, I, էջ 240-241)):

³ Խոսքը, հավանաբար, Թերեքի մասին է, որի մեջ են թափվում Կովկասյան լեռներից դեպի հյուսիս հոսող բոլոր գետակները՝ սկսած Էլբրուս լեռից մինչև Կասպից ծով: Տեղի կազակների շրջանում ավանդություն է պահպանվել, թե Թերեքի գետաբերանի մոտ հնում մի մեծ կամուրջ է եղել (տե՛ս Карапов Н., նշվ. աշխ., էջ 67, ծան. 37):

⁴ Խոսքը, հավանաբար, Եփրատ գետի՝ Չևգմայի արևմտակողմում գտնվող հայտնի կամուրջի մասին է (տե՛ս Մամանոյան Հ., Տիգրան Երկրորդը և Հռոմը, Երևան, 1940, էջ 67), որով հնում անցնում էր Արևելքն Արևմուտքին կապող խոշորագույն առևտրական մայրուղիներից մեկը (տե՛ս «Հայկական պետությունը Տիգրան II-ի օրոք», Երևան, 1987):

մեկն է և գտնվում է Ջազիրայի սահմանին՝ սահմանային շրջանի¹ մեջ մտնող Սունայսաթի² մարզում: Սանջը, որն իր անունն է տվել կամրջին, Ֆրատ³ գետի վտակն է⁴:

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ ԲԱՆԹՈՒՄ⁵ ԿԱՄ ՉՈՐՐՈՐԴ ԾՈՎԻ ՄԱՍԻՆ

(66) Չորրորդ կամ Բանթուս ծովը բուրդարների, ռուսների և այլ ժողովուրդների ծովն է, որոնք ապրում են Կասթանթինիայից այն կողմ և Լազիկայից հյուսիս: Նրա երկարությունը 1300 մղոն է, իսկ լայնությունը՝ 300 մղոն: Այն միանում է Մայթաս լճին, որի երկարությունը 300 մղոն է, իսկ լայնությունը՝ 100 մղոն:...Այս ծովը ջրանցքներով ու գետերով մի քանի տեղում միանում է նաև ալ-Բաբ վալ-Աբվաբի ծովին: Այս հանգամանքը շփոթության մեջ է գցել մի քանի հեղինակների, որոնք նկարագրել են ծովերը, բնակելի աշխարհը, Բանթուս ծովը, Մայթաս լիճն ու Խազարական ծովն իրար միացնող [գետերը]:

(77)...Պարսից ժողովրդի երկրի սահմաններն ընդգրկում են Ջաբալը⁶՝ Մահաթում⁷ և այլն, Ադարբայջանը՝ մինչև Արմինիա, և Առանի ու Բայ-Բայլականի⁸ տարածքը՝ մինչև Դարբանդ, որն ալ-Բաբ վալ-Աբվաբն է,

¹ Խոսքը արաբա-բյուզանդական սահմանային ամրությունների գոտու մասին է: Այն ձևավորվել էր արաբա-բյուզանդական պատերազմների ընթացքում և տարածվում էր Միջերկրական ծովի կիլիկյան ափերից մինչև Բարձր Հայքի Կամախ քաղաքը: Այն բաղկացած էր երկու մասից՝ Կիլիկիայի (Ատրիքի սահմանային ամրություններ) և Միջագետքի (Ջազիրայի սահմանային ամրություններ) (տե՛ս Տեր-Ղևոնդյան Ա., Արաբական սահմանային ամրությունների գոտին (Սուղուր), - «ՊԲՀ», 1981, թիվ 2, էջ 134-149):

² Իմա՝ Սամոսատ:

³ Իմա՝ Եփրատ գետ:

⁴ Հավանաբար, Եփրատ գետի աջափնյա վտակ Սաջուրը Մամբիջ բնակավայրի մոտակայքում: Արաբ հեղինակը, թերևս, շփոթում է Սանջի (Սաջուր) կամուրջը հռչակավոր Ջևգմայի կամրջի հետ (տե՛ս Հայկական լեռնաշխարհ և հարակից շրջաններ, ֆիզիկական քարտեզ, - «ՀՍՀ», հատ. 2, Երևան, 1980, էջ 176):

⁵ Իմա՝ Պոնոսոս: Խոսքը Սև ծովի մասին է:

⁶ Բառացի՝ լեռ կամ լեռնային երկիր: Այդպես էր կոչվում Տիգրիսից արևելք ընկած լեռնային շրջանը (տե՛ս Карагтов Н., նշվ. աշխ., թիվ 29, էջ 56, ծան. 4):

⁷ Արաբները Մահաթ էին անվանում Մարաստանը (տե՛ս Карагтов Н., նշվ. աշխ., էջ 68, ծան. 43):

⁸ Համապատասխանում է այժմ Օրեն-կալա կոչվող ավերակներին (տե՛ս Тревер К., Очерки по истории и культуре Кавказской Албании (IV в. до н. э.-VIII в. н.э.), М.-Л., 1959, էջ 265-266. Տե՛ս նաև “Большая Советская Энциклопедия”, т. 18, Москва, 1974, էջ 505):

(78) Ռայը¹, Թարարստանը, Մասկաթը, Շաբրանը², Ջուրջանը, Սաջաստանը³, Քրմանը⁴, Ֆարսը⁵...:

(89)...Նրանք (իմա՝ քրդերը-Ա.Ե.) ցրված ապրում էին Ադարբայջանում և Արմինիայում, Առանում, Բայլականում, ալ-Բաբ վալ-Աբվաբում, Ջազիրայում, Շամում⁶ և Սահմանային շրջանում⁷:

(352)...[Մուտասիմը]⁸ 220թ.⁹ ուղարկեց ալ-Աֆշինին¹⁰ այլ զորավարների հետ Ադարբայջանում Բաբաբ Խուռամյանի դեմ պատերազմի: (353) Նրանք հաղթեցին, և Բաբաբը գերի ընկավ ռամադան ամսին¹¹ կամ մյուսների հաղորդմամբ, 222 թ.¹² շավվալ ամսին¹³: Նրան տարան Սուրրամանրա¹⁴, որտեղ նա մահապատժի ենթարկվեց 223 թ.¹⁵ սաֆֆար¹⁶ ամսին: Բաբաբի զոհերի թիվը այն 22 տարվա ընթացքում, երբ նա պատերազմում էր Մամունի¹⁷ և Մուտասիմի զորքերի դեմ, հասնում է ամենաքիչը 500000-ի: Այս հաշվարկից դուրս են մնում շատ շատերը: Բաբաբը ապստամբություն բարձրացրեց Մամունի խալիֆայության ժամանակ՝ [իիջ-

¹ Քաղաք հին Պարսկաստանում, Թեհրան քաղաքից մոտ 10 կմ հարավ արևելք (տե՛ս al-Rayy, C. E. Bosworth, EOI, CD-ROM, VIII:471a):

² Ներկայումս համանուն գյուղը Շաբրան-չայ գետի ափին (տե՛ս Երեմյան Ս., նշվ. աշխ., էջ 73):

³ Կամ Սակաստան: Սակերի երկիրը զբաղեցնում էր ներկայիս Աֆղանստանի և հյուսիսարևմտյան Չնդկաստանի տարածքը (Sistan, C. E. Bosworth, EOI, CD-ROM, IX:681b):

⁴ Պարսկական մարզ, որը զբաղեցնում էր Իրանի ներկայիս մայրաքաղաքի շրջակա տարածքը (տե՛ս Kirman, A. K. S. Lambton, EOI, CD-ROM, V:147a):

⁵ Ներկայիս համանուն մարզը Իրանում (տե՛ս Fars, L. Lockhart, EOI, CD-ROM, II:811a):

⁶ Ներկայիս Սիրիայի տարածքը (տե՛ս al-Sham, J. Lentin, EOI, CD-ROM, IX:261b):

⁷ Խոսքը արաբա-բյուզանդական սահմանային ամրությունների գոտու մասին է:

⁸ Մուտասիմը խալիֆա է եղել 833-842 թթ:

⁹ Իմա՝ մեր թվականության 835 թ.:

¹⁰ Արաբ զորավար, որը պարտության մատնեց Բաբեկին (տե՛ս 234-243 ص بيروت، ، ابن الاثير، الكامل في التاريخ، ٥):

¹¹ Մուսուլմանական օրացույցի 9-րդ ամսվա անվանումը (տե՛ս Ramadan, M. Plesner, EOI, CD-ROM, VIII:417b):

¹² Իմա՝ մեր թվականության 836-837 թ.:

¹³ Մուսուլմանական օրացույցի 10-րդ ամսվա անվանումը (տե՛ս Shawwal, A.J. Wensinck, EOI, CD-ROM, IX:380b):

¹⁴ Սամարա քաղաքի անվան աղավաղումն է, քանի որ Բաբեկին մահապատժի են ենթարկել Սամարայում (տե՛ս ابن الاثير، V, էջ 245-246):

¹⁵ Իմա՝ 837-838 թ.:

¹⁶ Մուսուլմանական օրացույցի 2-րդ ամսվա անվանումը:

¹⁷ Մամունը խալիֆա է եղել 813-833 թթ:

րայի] 200¹ կան 201 թ.², Ադարբայջանի Բադդ [երկրի] լեռներում: Բաբաքը բաբը գլխավորում էր իր ուսուցիչ Շահրիբ Խուռանյանի որդի Ջավիդանի³ հետևորդներին, ինչպես նաև այլ ժողովուրդների»:

¹ Իմա՛ մեր թվականության 815-816 թ.:

² Իմա՛ մեր թվականության 816-817 թ.:

³ Խուրանյան շարժման առաջնորդը: Նրա մահից հետո Բաբեկը հայտարարեց, թե Ջավիդանի հոգին հայտնվել է իրեն, ուղքի հանեց Բադդ երկրի ժողովրդին և դարձավ շարժման առաջնորդ (տե՛ս Babak, D. Sourdel, EOI, CD-ROM, I:844a):